

„Droschak“

**ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.**

2024

„ՀԱՅ ՅԵԳՈՒԽՎԱԿՆ ԴԱԼՄՎՅՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԻԱՆԹԻՒՆ ԹԻՒՐՔԵՐԸ ՀԵՏ

Ներկայ խնդրի մասին խօսելու մեջ առիթ է տալիս
„Դրաշակիս նախընթաց համարում տպագրած Տամատ
Մահմատ կաշայի նամակը, որ Հայերին ուղղած մի ընդ-
հանուր կոչ է՝ միանալու թիւքքերի հետ։ Մենք յարմար
ենք համարում այդ նամակի առիթով յայտնել մեր
կարծիքները նաև ընդհանրապէս բոլոր թիւքք հակա-
սութանական կամ աւելի ճիշդն ասած՝ հակա-
համիդական տարրերի մասին, որովհետև՝ չնայերով այն
բոլոր տարրերութիւններին և երգեմն նոյնիսկ փոխադարձ
թշնամական յարաբերութիւններին, որ դիտում են
դրանց մէջ այդ տարրերը բոլորն էլ վերջին ժամանակ-
ներս, մեծ համերաշխութիւն են արտայայտում, երբ
հարցը գալիս է հայերի հետ միանալու ինսդրին։

Կար ժամանակ, որ մենք էինք թիւրքերին անդադար միացած կռւի հրաւիրում և զարմանում նրանց անտարբերութեան վրայ դէպի Տաճկաստանի ընդհանուր ողբալի վիճակը կը կը կար ժամանակ, որ մենք էինք նրանց բացատրում մարդկային ամենալայն գաղղափարներով ներշնչած մեր ծրագիրը, որպէսզի նրանք աներկիւղ մօտենան, հասկանան մեզ և աջակցեն ընդհանուր գործին. Կար վերջապէս ժամանակ, որ ամէն անդամ, երբ մեր կոչերին արձագանք տւող ունեցած անկեղծ ձայն էինք լսում մեր թիւրք հայրենակիցների բանակից, մենք ամբողջ յօդւածներ էինք նւիրում „Դրօշակում“՝ այդ առիթներով մեր հրաժարական քը լս արտայացելու համար: Իսկ այժմ... այժմ գերերը փոխել են. այժմ ոմիութեան՝ հրաւէրները անդադրում կերպով տեղում են թիւրքերի կողմից, և մենք ենք, որ՝ չնայելով մեր ամենաբար գործին անդադրում համար ատիպւած ենք անմռուղական դիրքի մեջ մնալ:

Պատճառը պարզ է: Զայները այնտեղից չեն լսում, որտեղից մենք վաղուց իվեր շարունակ սպասում ենք, և այն դիմիչ ձայները չեն դրանք, որոնք ուժեր են կազդուրում, սրտեր են վառում, եղբայր եղօրը ճառաջեցնում... Ինչպէս միութեան գաղափարը — այն գաղափարը, որ գեռ 10 տարի առաջ մենք ընտրել ենք իմրեւ հիմնական կէտ մեր ծրագրում — պահանջեց այս քան տարիներ երիտասարդ թիւքքերի շըջաններում

ևս համակրութիւն գտնելու համար, երեւի նոյնպէս
տարիներ կը պահանջեն՝ մինչև որ կիրադրոծի այդ
միութիւնը՝ ազգով տարբեր, բայց միևնույն թշնամու-
դէմ կռւող տարրերի մէջ:

„Սիանակը“—գեղեցիկ միտք. բայց ում չետ և ի՞նչպէս Հայ յեղափոխականները վաղուց են հրապարակի վրայ և վարում են արդէն այն կուրք, որի անունով մեզ հրաւիրում են միանալ. Խսկ ուր են թիւրք-կռւող-ները. . . Մինչև այժմ մենք տեսանք անհատներ, խմբեր, թղթե պրօպագանդայով պարապողներ, բայց չտեսանք գործութեան կռւողներ, գործութիւն պրօպագանդիստներ։ Կորւած բուն տաճիկ ժողովրդից և յենւած սակաւածիւ թիւրք ինտէլիգենցիայի մի անշան մասի վրայ, երիտասարդ-թիւրքերը, մնում են դեռ ևս „յեղափոխութիւնը իվերուստ“ հասկացող պօլիտիկաններ, թոյլ անկազմ և հետեաբար դեռ ևս անգործ, իօսքի մարդիկ. . .

Խօսելու համար միանա՞նք:

Եւ երանի թէ գոնէ խօսքի պրօպագանդը տանէին դրանք այն ձշմարիտ ուղղութեամբ, որը համապատասխանում է տաճիկ ժողովրդի ժամանակակից կուլտուրական պահանջներին: Թերթեցէք երիտասարդ թիւրքերի հրատարակութիւնները, և դուք չէք գտնի նրանց մեջ ոչ մի կոիւ տաճկական կեանքի այն ներքին կաշկանդիչ գործոնների գնայի լինյել երբեւ և հարւածել ենք ոչ պահանջանայի արտաքին թշնամուն: — Աներ պատմութիւնը եւրօպականից բարձր է, մեր հաւատահամբերութիւնը աւելին՝ գրում է մեկը: — Զետք Տաճկաստանում ոչ մի չարեց, որ աւելի մեծ չափերով գոյութիւն չունենար լուսաւորւած կոչւող Եւրօպայում: — Երբաքար կըրկնում է անդադար միւսը (*): — Միակ չարեցը սուլթան

*) Օրինակի համար յեշենք այստեղ թէկուզ միմիայն ապագայ սուլթանական սենեկապետացուների բոյն՝ նՄէշ-վէրէթ“ լրագրի սեպտեմբեր ամսւայ համարի երկու յօդւածները — „Ինչո՞ւ“ և „Մեղալուր են թէ՞ ո՞ւ“: Այդ յօդւածներից առաջնում լրագիրը, իրեն յատուկ երկդիմի, ձիուլիթական ձևերով, զայրանում է այն բողոքի դէմ, որ բարձրացնում են երօպացիք ու երօպական լրագիրները Սպաղանքի կոտորածի առիթով և արդարացնում է իրողութիւնը հարցնելով՝ ինչո՞ւ Անգլիա և Փրանսիա կարող են Սթրիկայում սպանութիւններ աւնել իսկ քիւրդը կամ տաճիկը իրենց երկներում չեն

Համիդի անձնաւորութիւնն է և Տաճկաստանի քառարդ դարւայ ամբողջ տագնապը՝ միայն նրա քմահաճոյը-ների արդիւնքը: Զի լինի Համիդը, և Տաճկաստանը կը դառնայ օրինակելի երկիր, — աչա ինչ են միաբերան կրկնում բոլոր երիտասարդ թիւքերը, աչա զանազան ձևերով համեմած ինչ հոգեւոր մնունդ են մատակարարում նրանք իրենց ժողովութիւնների, կրօնական և այլ սպանիչ նախապաշտամունքների դիմաց ու կամայակամայ շոյելով նրա հակակուլտուրական հակումները...»

Սրանց հետ միանանք:

Անկասկած, հէնց այդ պրիմիտիվ աշխարհ հաւայեցք ով է բացատրում և այն երկայինը, որ երիտասարդ թիւքերը, մեծից սկսած մինչև փոքրը, հայկական հարցի վերաբերմամբ միշտ ներշնչած են միւնոյն ոգով, այսինքն՝ հայկական հարցի համար, իբրև միջագդային խնդրի՝ համար, ոչ մի արդարացուցիչ հանգամանք չտեսնելու հակումներով հայերի կրած սարսափները նրանց թշւառ գլխին փաթաթելու պատրաստականութեամբ, հայկական կոտորածները անողողակի ձեւերով արդարացնելու տրամադրութիւններով և վերջապէս մի այնպիսի պահանջկոտութեամբ գէպի մեզ որ կարծեն թիւք ժողովուրդն է մեծապէս վնասւել հայերից և վերջիներս են, որ դեռ մի բան պարտական են նրան: Սա արդէն չարիքի գիտակցութիւն չէ, սա մեր սպասած թարմ, գաղափարական հոսանքը չէ, սա սառանց խորութեան կրօնի և ազգի ինդիրներ դնող և այդ ինդիրներով տանջող գործիչների ընթացք չէ, այլ միմիայն թուլացող տաճկական պետութեան քաղաքական արտաքին դիրքը պահպանելու ձիգեր — ձիգեր, զրոնք իբրև թէ անպատճառ պահանջում են հայկական և որիշ հարցերի կատարեալ չէզօքացումը Տաճկաստանում: Աչա սրանք,

կարող իրենց հասկացած ձևով դադաստան կապել հայ աւազակների հետ: Երկրորդ յօդւածում «Մէշվէրէթլ» կրակ է թափում եւրոպացոց վրայ, որոնք բողոքեցին թէ ՚Իիարբէկիրի հերոս Ենիսէ-փաշայի Հալէպ նահանգապետ նշանակելու դէմ և թէ Բիթլիսի զինուորական հրամանատար Ալի-փաշայի դէմ, որ հեղինակ եղաւ Սպաղանքի և ուրիշ գիւղերի կոտորածին».

«Սուլթանի և մանաւանդ ներքին գործոց նախարարի պարտըն է պաշտպանել իր պաշտօնեաների պատիւը և օրինաւոր վարմունքը», — թելադրում է լասգիրը և շարունակում — «Սպաղանքի դէպքը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ գերմանական կայսը հրամայում էր Զինաստան գնացող իր զինուորներին ոչ մի գթութիւն ցոյց չտալ դէպի նրանց, որոնք կը դիմադրեն զէնքով: Եթէ Վիշէլիմի այս խօսքերը ուղղած լինէին Ալի փաշային, սա իր հերոսական գործերի համար վարձատրութիւն կը ստանար»:

այս մարդիկն են, որ այսօր միութեան ձեռք են մեկում մեզ: Եւ եթէ մենք միշտ պատրաստ ենք ընդունել այնպիսի ձեռքեր, որոնք ընդունակ կը լինեն հայերին դիմելիս զգալ իրենց պատմական հրէշաւոր յանցանքը, ամաչել և սոսկալ այն անօրինակ ոճիրի գիմաց, որ կատարեց հայերին վերաբերմամբ իրենց դժուկը երկում և իրենց ժողովուրդի աչքի առաջ եթէ մենք պատրաստ ենք ձեռքերին այնպիսի թիւքերին, որոնք ամէն բոպէ կը գիտակցեն հայ ժողովուրդի անօրինակ գժմախտութիւնը և քաղաքացիական համարձակութիւն կունենան թէկուզ արարաշխարհի առաջ և ամէն հանգամանքներում բարձրաձայն գոչելու թէ այնպիսի մի սատանայական կառավարութեան դէմ, ինչպիսին տաճկականն է, «հայերը իրաւունք ունեին և ունեն ինչ միջոցների էլ ասես դիմելու, — ապա այդ գիտակցութիւնից և քաղաքացիական այդ զգացմունքից զուրկ ձեռք մեկողների դիմաց մենք կարող ենք միայն բացականչել».

Ի՞նչպէս ընդունել այս ձեռքերը, որ ուզում են միայն մեր ձայները խեղդել...

Եւ յետոր Երիտասարդ թիւքերը կարող են ցոյց տալ մի խումբ, որ ընդունակ լիներ մեզ հաւատ ներշնչել գէպի իր բարձր ու կարծի այն փոքրիկ գործերում, ուր մենք միշտ կարող էնիր համերաշխարհ ընթանալ: Քանի-քանի շանտաժիստներ տեսանք մենք ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութիւնների, բոլոր խմբերի մէջ: Անուններ չտանք: զրանք շատ յայտնի են մանաւանդ իրենց թիւքերին: Միակ հայը, Անմեղեան անունով որ սոսկ-գլխով յարել էր «Մէշվէրէթլ» խմբակին, սա էլ իր կարձատել թղթեայ գործունէութիւնը «Մէշվէրէթլ» մժնողը տուում վերջացրեց կաշառելով սուլթանից և վերադարձաւ Պօլիս պաշտօնի: Խանը է խոստովանել որ Երիտասարդ-թրբութիւնը այժմ ապրուստ ճարելու, անձնական կարիերա ստեղծելու մի սինօնիմ է դարձել Եւրօպայում: Զկան համողած մարդիկ, չկան անձնուրաց գործիչներ, չկան բարյոյական մաքուր բնազների տիպարներ, որոնց հետ միայն կարելի է կապել յեղափոխական կուի տատասկու ճանապարհին...

Ում հետ միանանք:

Իսկ որն է այն ծրագիրը, որ պէտք է համախմէտ տաճկակապատկ բոլոր նեղուող բոլոր գժգոհ ու բողոքող տարբերին. ի՞նչ պէտք է ընդունել բոլորիս համար պարտաւորեցուցիչ նպատակ և որոնք են այն մի ջոցն երը, որ պէտք է հասցնեն մեզ մեր նպատակին:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» — որի անունից միայն իշարէ մենք իրաւունք ունենք խօսելու — ընդհանրացնելով Տաճկահայաստանի վերաբերեալ իր ծրագիրը, կարող է առաջարկել համայն Տաճկաստանի համար մի կազմակերպութիւն, որը — միւս հաւասար

պայմաններում — անշուշտ ընդունակ է միացնել
բոլորին: Դա ֆեր բրատիվ (դաշնակցական) ու ամ-
կավարական կազմակերպութիւնն է, որի համա-
ձայն տաճկահպատակ բոլոր ժողովուրդները կազմում
են մի անխափառ ամբողջութիւն, բայց իւ-
րաքանչիւրը իր ներքին, տեղական ինքնավա-
րութեամբ: Երիտասարդ թիւբքերը դրա տեղ գնում
են Միթհագումաշայի սահմանական ագութ ու թիւնը՝
կարծելով, որ դա միանդամայն բաւարարութիւն կըտայ-
բոլոր տարրերի կուլտուրական պահանջներին:

վերդի էական պահանջները գոհացում կըստանան. տես-
դային ջանքերով՝ պատուենք և ձեր ժողովը դիմակ-
ցութիւնը պատող խաւարը, — և մեզ կը յաջողւի հա-
մախմբել բոլոր տաճկահպատակ ժողովուրդների առա-
ջ ա դ է մ, օրին ապա հ և ազնիւ տարրերը,
որոնք միասին վերցրած և կըստան երկրին ա յ ն ուժը,
որի կարիքը զգացնում է: Եւ եթէ մերջապէս դուք
հաւատում էք սահմանադրութեան բարեբեր հետևանք-
ներին, թողէք նախ՝ ընդհանուր նպատակի առաջ մրա-
նան, իմի ձուլեն բոլոր տարրերը, իսկ նրանից յետոյ
կեանքի ընթացքը, ժամանակի պահանջները ինքնըստ-
ինքեան ցոյց կըստան՝ թէ որքան անհրաժեշտ է մինչև
Օտտօմանեան Դաշնակցութեան հաստատելը՝ ընդունել
իբրև իշխան, իբրև անցողական մի շրջան — ձեր փայլիայած
սահմանադրութիւնը: Բայց դուք, երիտասարդ թիւր-
քերդ, հակառակ էք դրան, և մէկ սուլթանին խիե-
լով՝ պատրաստ էք մեզ եւ չենայել:

Ի՞նչպէս հետևենք ձեզ. . .

Գալով միջոցների խնդիրն, այստեղ ևս գրութիւնը
անորոշ է: „Օսմանլին“ միակ խումբն է, որ յայտարարել
է իրեն յեղափոխական, իսկ „երիտասարդ թիւրքեր“
են իրենց անւանում բոլոր բողոքողները, բոլոր դժգոհ-
ները: „Մէշվէրէթը“ իրեն „կարգի և յառաջդիմու-
թեան“ կողմնակից համարելով՝ հանում է իր ծրագրեց
յեղափոխական միջոցները: Տամատ-Մահմուտ փաշան
պարզ չէ խօսում այն ձևերի մասին, որոնցով կարելի
է „ջնջել հայրենիքը կեղերող բռնակալութիւնը“, և
եթէ ներելի լինէր ենթադրութիւնների մէջ մտնել
միայն կարող էլու ասել որ յամենայն դէպս նա
„կարգի և յառաջդիմութեան“ կուսակցութիւնից շատ
աւելի է առաջդադէմ:

Ո՞ր միջոցների վրայ պէտք է կայանայ միութիւնը:

Հայրենակիցներ. մենք խօսեցինք ամենայն անկեղծութեամբ — այնպէս, ինչպէս խօսում ենք ինքներս մեզ հետ և ինչպէս վայել է լուրջ հարցերի դիմաց. Եթէ տեղ-տեղ մենք ստիպւած եղանք խիստ լեզու բանեցնել — դա բացատրում է ոչ թէ մեր կոշտութեամբ, այլ միակ ցանկութեամբ՝ չըողնել ոչ ներկայի և ոչ ապագայի համար մութ, անորոշ կէտեր: Իսկ մի անգամ էլ ձեր առաջ մեր տրամադրութիւնները շեշտելու համար՝ աւելացնում ենք և հետեւալը.

Թիւրքեր. մենք չենք ձգտում ոչ հայ թագաւորութեան վերականգման, ոչ թէկուզ 100 մարդուց միայն բաղկացած ունէ ազգութեան սպառնող գերիշխանութեան, ոչ էլ անպատճառ ձեր պետութիւնից անջատւելուն: Մեր դրութիւնը պարզ է. ինչպէս ձեզ վիճակւած է գործել ձեր ժողովրդի մէջ, ոյոնպէս էլ մեզ համար աւելի յարմար է մեր ժողովրդի պէտքերին հետևել եթէ մենք այսօր կոչում ենք բարձրածայն՝ „Աեցցէ հայ-կական շարժումը“, „Կեցցէ հայ եղափոխութիւնը“ —

դա չէ նշանակում, որ մենք միշտ պատրաստ չենք նոյն
ոգևորութեամբ նաև կոչելու՝ „ԱԵՋԵՇ ԸՆԴՀԱՆՈՒՐ օտտո-
մանեան ԼԵՂԱԳԻՈԽՈՒԹԻՒՆԸ”, „ՎԵՋԵՇ ԸՆԴՀԱՆՈՒՐ օտտո-
մանեան անկախութիւնը”: „Աշխատաւոր դասակարգերը
իրենց բնական և բազմակողմանի զարդացման համար
կարիք ունեն ի բ ե ն ց ա զ գ ե ր ի ա ն կ ա խ ո ւ-
թ ե ա ն ոչ պակաս, քան ընդհանուր ձայնատու-
թեան, կապակցութիւների և մամուլի ազատութեան”。
„ՓԵՂԱՊԴԱՅՆՈՒԹԻՒՆԸ չէ հերքում ազդայնութիւնը, այլ
նշանակում է միայն ազգերի ազատութիւն և հաւա-
սարութիւն”, — ասում է յայտնի Կառւցին: „Մ ի ջ-
ա զ գ ա յ ն ո ւ թ ի ւ ն ը նոյնքան հակառակ չէ
ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն, որքան սօցիալիզմը՝ ան-
հատականութեան, այսինքն անհատի զարդացման”。
„առանձին ազգերի անհատականութիւնը մարդկութեան
համար նոյնն է, ինչ որ հասարակութեան համար
անձնաւորութիւնների անհատականութիւնը” — պնդում
է Լիբէնեխտ, և մենք, ինչպէս տեսնում էք, չենք
հակասում և չպիտի հակասենք մի ջազ գայ այս յ-
ն ո ւ թ ե ա ն գարափարին:

Այս, լինելով հայեր, գործելով հայերի մէջ մէնք
մնում ենք մարդիկ և չենք կարող ուրիշներին պահանը-
ցանկանալ քան ուզում ենք մեզ համար: Ուրիշի հաշ-
ով ապրողների կամ նրանց իրաւունքների սահմանա-
փակման վրայ իրենց իրաւունքները. Տիմողների վատու-
թիւնը եթէ մենք չիմանայինք, սուլթանների տիրա-
պետութիւնը միայն բաւական կը լինէր դրանում մեզ
համոզելու համար: Տւէք մեզ ունէ հաւաստիք, որ միա-
նալով ձեզ հետ՝ դրանով մենք չենք ապահովի միայն
ձեր հանգստութիւնը՝ թէ հայկական հարցը յաջողա-
բար խեղդեցիք և որ այդ հարցից այլևս վտանգ չկայ-
օսմանեան գերիշխանութեան և նրա վաղեմի աշխարհա-
կալ փառքին, այլ դրանով ձեռք կը բերենք թիւըք
իստէլիգէնցիայի մի արժանահաւատութեալ, որ
կարող է բարեփոխել մեր ժողովը դրդի դրու-
թիւնը, — և մենք յեղափոխականին վայել աւիւնով
կը վազենք ձեր շարքերը ամրապնդելու:

Բայց ե՞րբ կը լինի այդ. . .

Φ Ζ Φ Ο Ι Σ Ο Η Φ Η Η Τ Τ Β Γ

ՆԱՄԱԿ ՎԱՆԵՑ

20 *յունիս*

Կառւավարական գանձին դատարկութիւնը անօթի չունեցր բրած է կառւավարական, մանաւանդ ոստիկանութեան պաշտօնեաները, որոնք կաշխատին իրենց երեւակայութեան դօր տալով, նորանոր ինպիրներ երեւան հանել թէ գործունեայ երեւանալու և և թէ իրենց էնթրիկներու հնմականերն կեղեքելով՝ ապրելու համար, Գոտեր, անբարոյսկաններ իրենց պաշապանութեան տակ կը շրջնի քաղաքն ու այդեռաններն և ամէնքն ալ վստահ են, թէ ոսկոր մը նետելով Հիւմնի, Մէմէտի, Ասօյի, Մկրտիչի առջեւ ուզածնուն պէս կրնան շարժի, արհամարելով սեւէ գատարան ու արդարութիւնն Յեղափոխական ինպիրներ յուղելու և գրապահութիւններ ընկերու և ամար յիշեալ կոմիտարներու աջակից են կարգ մը շահամու և անսիփզ հայեր, որոնց պարագութիւններն են մասնիչ Զարըզնեան, քէօր Սրբահամը և Վազգէնի հին ընկեր՝ գաւաճան Յովհաննէս Սէմէր Շեան, որ անցեալ տարի կառավարութեան ձեռք յանձննեց Խաչիկ մասնով մի երիտասարդ՝ քան ոսկիի փախարէն, դօր տացաւ. քէօր Աբրահամի միջոցով,

Նօթ ութ ամիսներէ ի վեր Արձկէ գտաւափ 20-21
հայ զիւ զերու կողմէ մէկ քանի դիւզապետներ տեղիս
կառավարութեան դիմած էին՝ հայտաբաննի համարիէ-
ներու պետ և Ձեզի փաշալի միրական՝ դաշիճ քէօր
Հիւսէին փաշալի անզթութեաններու և խժէժութեան-
ներու դէմ բողոքելու և թէ վերջնին միջոցով իրենց
զիւղերը բոյն դրած քիւրդերը գուրու հանելու համար
և իրաւ. այդ զիւղերը որ Սիփանի ստորած կը
գտնին; բոլորովին այդ մարդկակերպ գայլի կամայա-
կանութեան ենթարկւած են; Իր զ օլ ա մ ն ե ր ն ամէն
զիւղ և ամէն տուն մուտք ունին, շատ մը հայ աղ-

ջիկներ (աւելորդ է յականէ անւանէց ըսեր) բանի փախ-
ցուցած եւ մանմետական գարձուցած են, իրենց հա-
կառակող մէկ երկու մոլորդներ սպաննած, կարդ մը
գիւղերու մէջ հայերու առևներ բնակութիւն հաստատած
եւ ուրիշ անթիւ քրդական բարեարսութիւններ Գիւ-
ղացիներ, ամէն վտանգ աշջ առած՝ գոլութի միութեամբ
մը թէ Բարձրագույն Դուռը եւ թէ պատրիարքարանը
անազին ծախքերով հեռացիր քաշելով ճար մը ինքանած
էին իրենց անել վիճակին

Կառավարութիւնը չպահանջած և միանդամանի յառա-
հատած անսոնց օրինաւոր, բայց ձ ա ն ձ ր ա լ ի զիմում-
ներէն, վերջապէս հաճած էր զօրք համելի անսոնց զիւղերն
թէ. քիւրբեր վարելու և թէ զիւ զայինները ձիւսէին
փաշայի զ օ լ ա մ ն ե ր ու զիմ պաշտպաններու համար
Խեղճերը Հիւսէին փաշայի գէափ երգնկա մելինումը
իրենց րողութիւ արդին ք կտրծած էին, մինչդեռ չեն
զիտեր թէ ուրիշ համրդիէններու պիխաւորներու հետ,
Զէքի փաշայի նախագահութեամբ, ո՞վ զիտէ ի՞նչ չա-
րեններ կը գաւեն Թողութը կեռ վլոյնած չէ. հոն
կանչւած է նաեւ, իմիջի ալլոց, Երիթի պէջը կ'ըստի
թէ նոր կանգարութիւններ պիտի բլան համրդիէնները
բարեկարգելու համար, անշուշտ ի վեաս հայ աղքա-
բնակութեան:

5 *juːʃn*

Արենեստական տոլլը գեռ վերջացած չէ, թէև հունձքը լաւ արդինք կը խոստանան: Ամբողջ նահանջը հայ կ'ազդակիէ: Կառավարութիւնը իրը թէ հացի սղութեան առջեւն առնելու համար՝ ինքը կ'ափարէ ցորմնենքը և իր ձևաբար ծախսն կուտայ, որով շատեր չեն ու զեր իրենց ունեցածը ծախսեաւ, իսկ շրջակայ նահանջներէն արգելաւած է զորենի արտածութիւնն, կարծես թէ մէկմէկու օտար եղած ըլլային: Հացի օխայի գինը 50 փարայէն 100 փարայի բարձրացաւ: հասած օդութիւններն կաթիլ մը չուր են Ո՞ւր է այն հիւրասէր գիւղացին, որուն առնըն հազարաւորներ կը կերակրէին: այժմ խոսածարակ կապրին եւ շատերը արդէն իրենց ապագայ ամբողջ հունձքն ձախած իրենց զաւակներուն պատառ մը հայ հայթայիշելու համար: Վաշխառու քաղաքացին արցուկի նման կը ծծէ գիւղացիներու առանց այն ալ չորցած, անօժութենէ նւաղած մարմինը:

Սովորն հետ ձեռքը ձեռքի առաջ կառավարութիւնն
անողոք կերպով հարկեր կը հաւաքէ. հարիւ բաւորներ
կը փախչին գեպի թուսաստան, հոն իրենց լնտանիքի
ապրուստը ճարելու յօյսով մէր են. («ուիշ.») Մրմաննեան.
ո՞ւր է հարկերու բաշխութիւն. ճանապարհներու ազա-
տութիւնը. ուր են իշխչ, հերիք չէ տակաւին հայ
ազգը խաբեր.

մի երկոյթ է. նա երբեք չի եղել պատմութեան մէջ երբեք չի էլ լինի. Թագաւորները յենուում են միշտ այս կամ այն դասակարգի վրայ, պաշտպան կանգնելով միշտ հզօրներին՝ ընդդեմ թոյլերի նրանք երբեմն աշողուում են սին խօստումներով հմայել ժողովրդային ընդհանրութիւնը, բայց և միշտ դաւաճանուում են նրա շահերին:

Բուրբոնները յենուում էին գլխաւորապէս ազնւականութեան ու կղերի վրայ, Ֆիլիպպի Օրլէանեան յենուում էր ազատամիտ բուրժուազիայի վրայ Բայց քանի որ բուրժուազական ազատամութիւնը վերջին խօսքը չէր. հասարակական էւլիւցիայի, քանի որ տնտեսական կենցը, գիտութիւնն ու գրականութիւնը նոր, աւելի ժարմ ու արմատական հոսանքներ էին արտադրել, հասկանալի է ուրեմն, որ անտագօնիզմը պիտի կանգուն մնար. Ժողովրդի ու իշխանի միջև և որ յեղափոխական-հանրապետական պայքարը պիտի յարատեւէր: Կորի էր կուսակցութիւնների, որ և կորի էր դասակարգերի Հանրապետականները — բանտորներ, համալսարանականներ, ինտելիգենցիայի ամբողջ ազատամիտ մասը — երազում էին 1793-ի հանրապետութիւնը: Միւս կողմից՝ հետզհետէ կազմակերպում էր բուն ընկերվարական կուսակցութիւնը իր յատուկ կերպարանքով և սկսում էր գեր խաղալ հասարակական-քաղաքական կեանքում: 1830-ից մինչև 1840 բազմաթիւ խրառութեր ու ապրատամրութիւններ տեղի ունեցան բանտորական աշխարհում: Յեղափոխական պրօպագանդը աճում էր, կազմակերպում էին նոր նոր դաւադիր ընկերութիւններ, որոնց ղեկավարն ու հոգին էր հռչակաւոր Բլանկի Լուի Ֆիլիպպի կառավարութիւնը: Հայտնում էր այդ ընկերութիւնները, բռնութեամբ ճնշում հանրապետական ցոյցերը և դրանով խակ փորում էր իր սեփական գերեզմանը:

Ըստ շանցաւ, և Եւրօպան նորից դղբաց Փարիզի
ահեղ որոտումներից։ Յուլիսեան յեղափոխութիւնը
կրկնեց 1848-ի փետրուարին աւելի մեծ ու ահաւոր
չափերով։ Հնչեցին դարձեալ ոկորչի թագաւորը՝
աղաղակները, գիւտած ժողովուրդը ներս խռովեց Ազ-
գային Պատգամաւորական ծողովը և մէկ հարածով
յեղաջրծեց տիրող քաղաքական ուժիմը; սահմանելով
ու ամէ ավարութիւն։ Յեղափոխութիւնը ուրա-
գանի պէս փչեց ամբողջ եւրօպական ցամաքի վրայից
և արբայանիստ մայրաքաղաքները վառեց ապստամբու-
թեան հրդեշով։ Վէննա, Բերլինի ոտքի կանգնեցին
Սիէկիլիա, Նապոլ Միլան, Պրադա, Դրէզդէն և այլն հե-
տեւեցին նրանց օրինակին, և աղատութեան մարտիկների
արիւնը հոսեց ամիսներով։ Վէննաի ժողովուրդը՝ Փա-
րիզի անցքերով յափշտակւած՝ սկսեց մի շաբա ապրու-
տամբութիւններ (Մարտ 1848), որոնք ստիպեցին թա-
գաւորին փախուստ տալ ու ստորագրել սահմանադրու-
թիւն։ Ապստամբութիւնը պայթեց Սիէկիլիա կղզու վրայ
և այնտեղից տարածւեց ամբողջ Խալիխյում։ Զեխերը
ունգարացիք նոյնպէս բարձրացան, և շատ շանցած
բովանդակ Աւստրիան իր բազմատար ու բազմաէզու-
ցեղերով լողում էր արեան գոլորշիների մէջ։ Իտալիայի
աղատագրութեան առաջին փորձերում արդէն փալլում
են Գարիբալդիի ու Մաձինիի պայծառ դէմքերը։ Ապրու-
տամբութիւնը խեղուեց, իրաւ է ուսակցիան յաղթա-

Նակեց Խտալիայում դրակօնական միջոցներով—բայց ապստամբների այդ առաջին և Հսկայական ձիգը ապա արդիւն չանցաւ, նա զարկ տւից ազգային ինքնաճանաչութեան, որը պիտի տար իր բաղձալի արդիւնքը 12 տարուց յետոյ:

ԱԷնայի պատամբութեան հետևեալ օրը (մարտ 18
պայթեց Բերլինը: Պաղ, խոհուն, ծանրաշարժ գերմա-
նացիք առաջն անդամը նորագոյն պատմութեան մէջ
բարիկադների էին դիմում: Ի՞նչ էր նրանց պահանջը—
նոյնը, ինչ որ ամէն տեղ՝ ապրել 19-րդ դարու կիսում
քաղաքացիական մարդավայրել կեանքով ազատ ֆեօդա-
լական: Կաշկանդումներից: Սահմանադրութիւն, ազատ-
մամուլ ու խօսք, ազատ առևտուր ու արդիւնագործու-
թիւն — աշա գերմանական աշխարհի պահանջները
1848-ին: Միահեծան պետերը ահարեկւած՝ յետ էին
նահանջում ապստամբների առջև և շտապում էին
ստորագրել այդ պահանջները: Ո՞րքան հզօր է յեղա-
փոխութեան աստածը, և ո՞րքան անողորմ է նա ազա-
տութեան դաշիճների դիմաց: Ահաւասիկ պատմական
մի վսեմ: անմոռանալի վայրկեան, երբ եւրոպական վե-
հաշուր մայրաքաղաքները մին միւսի ետեից անձնատուր
են լինում յեղափոխութեանը և երբ ժողովուրդների
վեհերու հրամանատարները լեղապատառ՝ մի անձիւն
են փնտրում պատսպարելու իրենց յանցաւոր գոյու-
թիւնը... Ապստամբները տիրանալով Բերլինին՝ չուզե-
ցին ջնջել միապետութեան գարշելի հաստատութիւնը—
այդչափ դեռ չէին հասունացել գերմանացիք, — բայց
նրանք ուրիշ կերպ վըէժինդիր եղան գարաւոր բռնա-
կալութիւնից: Սահմանադրութիւնը կորզելուց յետոյ՝
նրանք ուղեցին որբան կարելի է նւաստացնել վեհա-
պետի անձը: Մի օր նրանք բերին ազատութեան նա-
հատակների դիմականը դարսեցին ազգայական բակում,
սպա կատաղի գոռում գոչումներով դուրս կոչեցին
մագաւորին ու թագուհուն և ստիպեցին նրանց գլուխ
ոսնարհեցնել ի յարգանս մեռածների... .

— 8 1811-ի արթանու երկաթի քաղաքականութեամբ
Համալսարանական երիտասարդութիւնը, ինտելիգէն-
ցիան առաջապահի դերը խաղացին 1848-ի պահպան-

կան շարժումների մէջ, 'Նրանց շարբերում մենք տեսնում ենք դարուս ամենափայլուն գէմքերը՝ Կարլ Մ արքս, որ կոչւած էր ի մի ձուլելու համայն աշխարհի քանորդ ընդհանրութիւնը, Կարլ Գոխտ, անխոնչ կուռզը և գիտնական-փիլիսոփան, Ֆրիդրիխ Էնգելս, պատանի Լիբեն եխտ, Միխայիլ Բակունին, ուսւ յայտնի յեղափոխական, որ հոգին էր Պրեզդէնի ապստամբութեան, են են:

Փետրւարեան յեղափոխութեան նախընթաց օրն էր, որ Կարլ Մարքս իր հռչակաւոր մանիֆեստով արձակեց աշխարհին շառաչալից կոչու ոպրոլետարյունը՝ բոլոր երկիրների՝ միացէք^Ա: Համաշխարհային մի երևոյթ էր այդ կոչու քանի որ Մարքսի մանիֆեստը դարձաւ յետագայում միջազգային սօցիալիստ պրոլետարիատի աւետարանը՝ նա անում էր համարձակ մարդարարէութիւններ, նա ներշնչում էր վարդագոյն յոյսեր: Երիտասարդ Մարքսը գուշակում էր 1848-ի բուրժուազական յեղափոխութիւնից յետոյ անմիջապէս սօցիալական դաստիարակութիւնը և պիտի սահմանէր մարդկանց մէջ կօմմունիստական հաւասարութիւն: Մօտիկ ապագան չարդարացրեց այդ վառ յոյսերը, և ընկերվարական մտածողները, որ փոքր առաջ հաւատում էին սօցիալական յեղափոխութեան շուտափոյթ դալստեան և սօցիալիզմի մօտալուս յաղթանակին, այժմ ընդունում են, որ այնպիսի մի վիթխարի հարց, ինչպէս հասարակութեան արմատական յեղացրջումն է, պահանջում է տարարախտաբար երկար, շատ երկար ժամանակի անդուր աշխատանքը... .

Այլրող Փրանսիան լուռ ու մուշջ ընդունեց Փարիզի
գեկրէտը, որ հոչակում էր Հանրապետութիւն: Ըստր-
ւեց — ընդհանուր հաւասար ձայնատութեամբ — ժա-
մանակաւոր մի կառավարութիւն: Թւում էր՝ թէ ներքին
կոիւնելին ու ալիքոծութիւնները՝ գէթ առժամապէս
պիտի դադարէին: Թւում էր՝ թէ հանրապետական
ու էժմիմը իր սագատութեան, հաւասարութեան ու եղ-
բայրութեան «ծանուցումներով այլևս առիթ չպիտի տար
դժգոհութեան ու խոռովութիւնների... Սակայն ընդ-
հակառակ՝ կուսակցութիւնները, կարծէք, այնուչետեւ
դարձան աւելի անհաշտ և դասակարգային կոիւը ըն-
դունեց աւելի սուր ու կատաղի կերպարանք: Ընկերվա-
րական կուսակցութիւնը, որ իր ներկայացուցիչներն
ունէր ժամանակաւոր կառավարութեան մէջ (Լուի Բլան,
Ալբէր), չէր ուզում բաւականանալ լոկ քաղաքական
յեղափոխութեամբ և ձգտում էր սօցիալական յ ե դ ա փ ո խ ո ո թ ի ւ ն առաջացնել, որը մի այն
կարող է բարոգել աշխատաւոր դասակարգի վիճակը:
Առաջին քայլից իսկ սկսւեց բաժանումն ու կոիւը հան-
րապետական կառավարութեան մէջ, այն ինչ՝ Յօրիէ,
Բլանի, Բարբէ կարմիր յեղափոխականները միւնոյն
պայքարը մղում էին դրսում: շարունակ աճեցնելով
գաղտնի ընկերութիւնների թւ:

1848-ի արիւնուածիւնների թիւը:

1848-ի արիւնուածիւնների արձանագրերիս՝ չենք կարող չէլ ազգային արշէստանոցներին (ateliers nationaux) տիւուր, ողբերգական պատմութիւնը, որ կը մայ յաւետ իրու անջնջելի փաստ բուրժուազական ապիկարութեան և մի պերճախօս ապացոյց, որ բանւորները միմիայն իրենցից կարող են ակնկալել իրենց

դասակարգային ազատագրութիւնը։ Առևի Քլան խմբա-
գրեց լե droit առ travail-ի (իրաւունք աշխատելու)՝
գեկրեաը, որի համեմատ՝ ոչ հանրապետական կառավա-
րութիւնը պարտաւորւում էր ապահովել բանւորի դրս-
թիւնը աշխատանքով և աշխատանք մատակարարել
ամէն մի քաղաքացու։ Անմիջապէս հրահանգւեց շինել
ազգային արհեստանոցներ՝ աշխատազուրկ բանւորներին
գործ տալու համար։ Դա ամենամեծ զիջումներն էր, որ
արեց բուրժուական հանրապետութիւնը բանւորներին։
Բայց հենց արդարեղից է սկսում արիւնոտ դրամը
Ճգնաժամ էր. աշխատանք չկար։ Անգործ մասսաները
մերկ ու քաղցած թափառում էին փողոցներում։ Կա-
ռավարութիւնը առերևս համաձայնեց պարապմունք
տալ նրանց, բայց փոխանակի իւրաքանչիւրին ըստ իր
ընդունակութիւնների և մասնագիտութեան աշխատե-
ցնելու, բոլորին էլ սահմանագիր հող փորել չնշին օրա-
վարձով։ Այդ միջոցին էր, որ գաւառներից սկսեց մեծ
հոսանք գէպի մարդարարաց։ Աշխատազուրկ բանւորների
թիւը աճեց, բարձրացաւ երկու ամսւայ ընթացքում
6,000-ից մինչև 100,000։ Այն ժամանակ օրավարձը
սկսեցին աստիճանաբար պակսեցնել շատերին նոյնիսկ
զրկեցին աշխատանքից, ապա և հրամայւեց արձակել
բոլորին ու բռնի յետ քշել գէպի գաւառները։ Բան-
ւորները ըմբռստացան, սկսեց մի տենդային ագիտացիա։
Սօցիալիստական պարագլուխները հրահրեցին նրանց
գէպի ապստամբութիւն։ Ընդհարումը անխուսափելի էր։

Պրօլետարիատը՝ զինւած ոտից ցգլուխ՝ բռնեց Փարփղի
ամբողջ արևմտեան քաղաքամասը, բարրիկադները բարձ-
րացան. . . “Խաղաղութիւն”—մռնչաց բուրժուազական
ու էակացիան, և գեներալ Կավէնեակը հրաման ստացաւ
չնիցել ապստամբներին: Պայթեց մի զարհուրերի ճակա-
տամարտ, որ յիշատակելի է Պարիկի արհաւերքների
պատմութեան մէջ.—Ի՞ կողմէց պրօլետարիատը, միւս
կողմից՝ ամբողջ բռուժուազական ու էակացիայի բանակը,
որ երդւել էր իսպատ ոչնչացնել սօցիալիստական ուրա-
կանը: Ամբացած Աէնտա Անտուանի արուարձանում՝ բան-
ուոները կռւեցին յամռու, մոլեցին ներեք օրւայ արիւն-
չեղութիւններից յետոյ զօրքը պաշարեց նրանց: Եւ. . .
սկսւեց կոտորածի, — ահների, մասսային կոտորած, որ
յայտնի է պատմութեան. մէջ ո Յունիսեան ջարդեր“
անունով: Բանուորները խմբովին մորթուսւեցին կամ աբ-
սուրեցին, տասնեակ հաղարաւոր պրօլետարներ ընկան
բարրիկադների տակ ապատութիւն“ մրմնջալով. . .

Ծանր, յուսահատեցուցիչ օրեր էին ֆրանսիական սօցիալիզմի համար: Մի առջևափեցնող հիմնավութիւն տիրեց ընկերվարականներին և բոլոր առաջադեմ տարրերին: Սօցիալիստական պրոպագանդը մարեց, նրա օրգանները խոփանեւեցին: Սօցիալիզմը ընկճեց և այնուհետև երկար ժամանակ է ներկանութեան նշոյլ չէր ցոյց տալիս: Զարմանալի չէ, որ երեք տարուց յետոյ (2 դեկտ. 1851) կատարւած Լուի Հանդոցէնի (*Հանրապետութեան Նախագահ*) պետուհան հարւածի փորձը պահեւեց աջողութեամբ և արիտոն հեղեղներով նւազնած փետրաւարեան հանրապետութիւնը վերստին փոխւեց: Կայսրութեան:

የኢትዮጵያና የስራ ወርቅዎች

σειραν Φοιλικού, καταρρέει σε πάνηκας. — Σαράντα
παρθένα ανθρώπινα μέρη ουδέποτε θεωρήθηκαν όμοια με την παρθένη της Καρολίνας, αλλά μόνο με την παρθένη της Αριάνας. Η παρθένη της Αριάνας ήταν η πιο γοητεύουσα γυναίκα που είχε δει ποτέ ο Λεονάρντο. Το πρώτο μέρος της παρθένης της Αριάνας ήταν το πρόσωπο, το δεύτερο η φύση, το τρίτο η φύση της φύσης. Η παρθένη της Αριάνας ήταν η πιο γοητεύουσα γυναίκα που είχε δει ποτέ ο Λεονάρντο.

Ծըր քրիստոնեայ վեհապետները չի հածեցան չամրդի լուսերեսին ուխտի գնալ եւ իրենց... բախտը փորձեւ ծըլլուզու ուրեց Շնարքի մը դիմեց իր աստածային շուրջ հմայքը իմացնելու համար. Օգտևելով պարսկց շատեւ ներօսա պյուղութենէն, աւելի կենաւոր է եւ խանքայա միջնորդներ գործ զրաւ, որպէսի Մուզաֆֆէր-Էղ-Շինը Պօլսի քերել տայ, քանի որ Պօլսին այժմ ջրի ծամբայ եղած է, իսկ ինը դադի չամրդը տեղին չի ջարժի, վախճան կատար պարտի:

Պարսից վեճապետները, հակառակ ի իրանց ժողովրդին թունդ մոլեսանդութեան, կը սիրեն երբեմն երբեմն ծամբորդել Եւ- րօպա, տանել քաղաքակրթութեան հրաշալիքները և լ. . . Նոր վայելումներ ունենաւ: Իրենց հետ կը տանեն անթիւ հետեւորդ- ներ, որոնք կը յեշնանեն իմ՝ „ամմանից գոնոնդ” Պարսից Շա- լինշաները, կը տանենանց, որ պահակ կենցաղ մը չունին թրաց ուլդաններուն պէս, որոնք իրենց պալատներուն մէջ թուլս ննտած՝ անչն օր մէջմէկ հակիթ կածեն. . . Միայն թէ շա- ներու այցելութիւնը նրօպա չունենար անհշագան կամ զայլի ազգեցութիւն հետանքէ նետահար պարսիկ ժողովրդին ան- շարժութեան վրայ:

Նար-Եղ-դին շահը, շահ Ապելի-Ապիմի մակիթին մէջ դժբախտ մահ մը ունենալէ պոած, քանի մը անզամ շափշփած էլ Երթոնակն եւ այդ պատճառաւ լուսամիտ ու բարենորդք վեճապես լրագրական նամրաւը կը պայեէք, թէեւ շատ նեշու չէ առկայօթ ու նախաւած եփօճու մը մէջ կեանքի եղաւ լիցնելու երբ նըն. միւսն լրակը միան լիսն:

Կարենի է զսի թէ մենու շահը քաղաքակերպութեան բարիքները գտանատողներէն էր, բայց երեսի կը պահէր անոր մէջ կամքի հզօր եւ պիստ չկեր: Որմեզդի եւ Ազրիմանի միջեւ տարութերող մըն էր:

սարսուներին գրելով համար:

Մուլաքաֆէր-էղ-դին եւս; նօրը պէս, մամբրոդութեան սիրա-
հար կերեմի: Կը յուսացի ու նոր շահը զացած երկներէն բան
մը կը տանի հետո ի հապատակներուն անլինուս գոյութիւնը
անկշանելու համար: ՁԵ կարեմի ըսկի թէ պարսիկ շահերը անձ-
նական գրուսանիք համար միայն կը թափառին աշխարհէ աշ-
խարհ, շղոփրութեան ու երեսապատութեան առարկա ըլլարու
համար, կամ անոնցմէ են, որոնք ծովը կերպան ու ցամաք կը
զանան: Մուլաքաֆէր-էղ-դին քաղաքակրթութեան կեանցով հե-
տաքրքրուող մըն է, քաջ որորդ մը ըլլայէ զատ, եւ գուցէ
կըմբնէն թէ վեհապետի մը կոչումը իր հապատակները քամտաւոր
նենին է, ինչ որ կը քարոզէին նաեւ պարսիկ հին բանա-
տեղներո:

Կար քամանակ, երբ արեւելեան թագաւորոնները, ինչպէս եւ սուլթանները, ինենց պալատի պարսափ նորիզոննէն ուրւո չեն եւեր եւ չեն գիտեր իրենց երկրին մէջ անցած զարձածը. շրջապատած պանկալեճներէ, շողոքոթներէ, մոլթին մէջէն կը կասալպարէին իրենց երկրը, որը չեն ծանչնար: Եղան վեհապետներ աւ աւելի հոգատար իրենց յանձնած հօտին, ծպտլած ատեն-ատեն ուրւո կելլէին, տեղէտեղ ման կուզային եւ իրենց ժողովիք վիճակ մօտէն ևս դժունին: Կը հարցուի որդէին առաջին հանդիպող ուրիշ կամ զեղացնի, որոնց պարա, միամիտ եւ իմաստուն խօսակցութիւնները կը պատմւին յածախ Տէքբաթներու մէջ եւ որոնք սովորաբար կեանքի մելամաղոտ վիճ-սովորութիւն մը. կը պարունակեն:

Սակայն այժմ այդ „երանելիք“ դարերը անցած են: Սուլթան Համբարձում, Կըսեն, պալատին մէջ ամսափակ գրադում մը

միայն ունի — կարդալ ոժքային եւ էնդրիկներով լի վէպեր ու մշակել եղբռնային մուլթ ծրագրեր:

Նոր շահը, քաղաքական եւ այլ նպատակով, 5-6 ամիս է ԿԸ ծամբորդէք ծրագաւ: Այսն կողմ ի՞ն արթիւելան բուրդ գլխով ու տարածակ, Մօնթէնիքիօք ՝Պարսկան հետաքրքրութիւնը՝ շափ- ենով, այնպէս որ „Պարսկական Նախականին“ հօնիսակին հետ կընանք ըստն՝ „ակտոց է խոստովանել որ ժիֆօքչու պարփէ- ռէմբ ունիսի“:

Բարիգ քաղաքը սիրավիր ընդունելութիւն ըրաւ, ինչպէս եւ Երևապյի հայ զամբականութիւնը: Բարիգի մէջ սպանութեան փոքը մըն ալ եղաւ շահին դէմ, որ եթէ յաջողէք, տոհմային սեւ ծակատագրականութեան ինքնիրաւորութիւնը պիտի ստանար:

Փրանսական „Ճիշ կենսուրախութիւններէն“ եւ մաճարանվրդէն խիստ գոյն պարսիկ վեհապետ քանի մը տեղեր աւ այցելելէ յետոյ կը պատրաստէք Ծուսաստանի ծավորվ վերադառնալ Պարսկաստան, մանաւանդ որ իր բացակայութեան երկարելով Ներքին Խլմուտմեր սկսան առաջ գալ:

Սուլթանը ամէն քար գլորցոց որ յաջողի պարսկց շաք Պօլիս հրաւիրելու: Տաճը տրամադրի չէր իր պատմական եւ կրօնական անհաշտ թշնամին հետ իրենքին զաւ եւ արդէն աւելի հնատեսն մտքեր կը նախատեսնէին շահին այդ այցելութեան լեռտանքոց: Պարծեն շահը ինչն ալ ամաչ կըզգաք աշխարհի եղուն նիկով, ու Մեծ Մարգանապանու տիտղոսը կը ող մարգու մը այցելել: Վերջապէս Թերթիւնը իրակա բանակցութիւններէ ետք պատրաստեցաւ ընդունելութեան պը օ տ օ կ օ լ մը, որով շահը սիրողման իսլամութեան քաղաքն ասախայլ փափաքին գորացում տևաւ: Մութանին ասորու ինքն ինչն:

Սուաշին անգամ է որ խալաթութեան իրկու սուստ խալեցածներ իրապու կը անդրդիպին, եթք մահմտական աշխարհի մէջ ողբեարքի ժաշճատին կը լաիք: Այդ տանկարգութիւնը մեռմանցի մը այլաբանական ծեւն ալ ունի:

Եաճ անցաւ Պալքաններէն, ուր հասած էր երեսն պարսից սկսարձակալութեան սուրբ, ուր սկիթացիք, չնպնութեան համար, առաքեած թոշուն մը, մուկ մը, նստ մը և ւն ղըկեցին: Պարսից Անապեսո նովի պէս անցաւ այդ հիմնին դարձերու լիշտակի լարերէն, ուր Միջերու ատորուշանները նրանի փառքին զը նեսեւէին:

Սուլազաֆքէր-Էլ-դին շահը ընկունեցաւ Պօլսոյ մէջ արքայալայի շքով: Սուլթանը խարած էր զայն: Շոգեկապէն շոգենսաւ կը ննեն եւ կը տանեն ուղղակի Օրթագիոն, փայտի կտորներով դաւաթօսւած նաւամատոյց մը, որկէ տիրուր եւ ներ փորդցերէ կառաջնորդեն ծուլօք, ամէն աշքէ հնու պատճեր: Մինչեն Կիյոսի Տօլմանաշէի պալատին առջեւ կելլէր սուլթանը ամբողջ լուսար: Նարծեն բաղադրական յանցաւոր մը ըստար կամ սուլթան Մուրատաթը, որ գորոնին ծամբով կը փախցնեն: Երեւենեան վեճապետներու որքան կը միջնեւ պահպատոր խաղալ ունց: Հապատակներուն հնոյ:

շահը գգացած է, որ ծովակը ինկած է: Յայտի է թիւքերը շահը Պօխս քերին զայն սուլթանի ստորադասը ցննելու անոր սորութ հոչակնու, մէկ հոսքով ինյատառակելու համար: Պօլոյ թիւքը լրագիրները „շաղմուկ“ մը կը յայտարարէին շահը միալիճն անսանած է սուլթանը եւ անոր ծերքը սմբուրած է: Համիդ, Խաչես Կերեսի, համբաւամութեան հարցը շափել: զատ, ուզեր է շահը ատելութիւնով պինել հայերուն էմ: Նթէ հաւատանք Ցուուցիկ լուրերուն, շահը չէ բարենաւը համբաւամութեան արինարբու խալեֆային „չէշմ“ ըսելի նթէ մտի նթեք չի յաջողեցաւ իր „սեւ կախարդութեան“ մէջ, այց շահին այնպիսի բարոյական հարած մը տուաւ, իշեցնելով այն վալիք մը աստիճանին, որ միւսիւման աշխարհը շահի այս կը նայի այժմ եթը սուլթանի հաւատարի, նու ծառայի կրայ:

Սուզաքքէր-էւ-դին շատ դժգոհ մեկնած է խալիքայութիւնը սոստիւնը, թէեւ Պօլոյ հիմասիւրոյ Թիրքը ներթէրը լորովին հակառակ լը հաշեն: Ձէ այցելած նոյնիսկ քարքին հաւոր տեղերը, պիտի անպատճած զաքսեր է ներգինք Դ'ամիք սուլթանին հետ Տակենքոյթի մը ատեն, որ երեք քառորդ մ տեսեր է, բերանին չեն քացած, լուր նստած, լուր քած մ են, կուտեցնարուն, որ Ծիր Խուրշիմա Մահմեկին հետ հարսացնութիւն շե կրնար ընել: Ծար օր առաջ օճքը պատելլ նայէց Պօլոյն, եւ որ մըն ալէ երե Ց ծամ կար զեր շոգեռոց սլաքու, կանուխ Մաքրիզի Ծան եւ հասարակ մարդու պէս ոսքի քայ սպասեց երօպական շոկելապոքն, որ պիտի նէր պիտի եւ եր... ո ժ ք ա խ մ տ ո ւ թ ի ւ ն ք: Ծար աւելի խաւ քան թէ մինեցաւ այդ արիւնային, այնուն անվիթ սարհէն, աև համեմալու, որ սուլթան Համեն չէ պարսկ սաստիւնին այն քարտը, որուն որվ մարտ Բայուզանուի: Խոնէն եւ, որ հեղանօրէն զաքը թէ օփէ Համերին՝ ուսէաց մը ամերիքի:

Պալվանեան երկիրներէն անցնելուն, Սօֆիա, Պէլքրատ աւելի
սիրամիր ընդունելութիւն գտած է քան սուլթանի մօս:

Նորէն Ռուսաստան անցնելուն շահը անշրջադ քաղաքական նոր մկրտութիւն մը պիտի ընդունած ըլլայ: Նուր կայ նաեւ թէ շահը իր հօր պէս այցելած է Հջմածինը եւ տեսակցած է հայոց կաթողիկոսին ննտ: Գուցէ պարսից շահը ուղած է առող Հասիդի արքունուց առաջարկինքուն դէմ հաւատափեց մը տալ հայ ազգին թէ ինը մերտ բարի տրամադրութիւններ կը տածէ դէպի հայ ժողովուրդը:

Ըահին պայուտ Նվրապայի մէջ սպասելի է որ քարոյական եւ նասարակական օգուտներ ստուշ թերէ հրանի մէջ: Գուցէ, Մուլազաֆթրէ-Էղ-Ռին շահը ժամանակը եկած սեպէ Որմզդի թագաւորութեան Անքիմսին, ապահով տվելման չամփի, Թագաւորութեան սահմաններուն վրայ եւ ձևուէ հաստատել հրանի մեծութիւնը ցավութիւն պիտի արած սիններուն վրայ, որոնք կը պարզաբեն Պերսանոլիսի աւերակներ, իր վկաներ Արեաց աշխարհի հն ու մեծատարած կայսրութեան: Մական կը հաստատանք թէ երկու խալիքաններու տեսակցութիւնը դրական հետեւանք չէ կարող ունենալ բացի այն լուրէն, որ Դուռը ուզերէ Պարսկաստանի մէկ քանի բաղադրուն մէջ հիւպատոսութիւններ հաստատել: զանոնք անօթիք ծգելու համար կամ շատ շատ տեղին միախիլմաններու մոլորանդութիւնը վայ պահելու համար հայերուն ուն:

Սովորագիր-էր-ոին -քածար մը, գուցէ եւ տան ե՞րան
մը բային հին պարսկական, որ կրշէ հին իրանի վրայ - պէտք
չէ արհամարէ բռն իրան ցեղին հապատութիւնը, բռն մէջ
մծութեան եւ ծանրդ հոգիի մը խմորը կայ: Ասոր ծոցէն
կայ Պատմա, մօծ բարենորդիչը, որ կախաղանի վրա այնքան
արձր զգալով ինքանին, արիական հապատութիւնով կը բաւէր,
անուժ ամրով սովորուս տակ կը սողայ¹: Թիւըքը շարսադրեր
այս տեսակ բարձրութիւններ:

Նոր շաբաթ փափաթելի է, որ դուք հանէ երկիր կղզիացւմն - ոչ անգիտական, ո՞յսպասպ կղզիացումն՝ - եւ բանայ սահմանները բաևսալիքութեան հուանցներուն առջեւ, համար ծինները, փէրինները, դեւերը եւ տայ նոր վերածութիւն լը այդ ժխնալի, այլ.. թուլցած եւ մարմապաշտ ցեղնին ու սէց զայն բախտի շնորհազեկումն։ Զրուանը, միշտ է, խոշոր և խոր ակօններ հերկած է անոր մակտին վրայ եւ պրած է զայն ուրծութիւն միջն պէս անկենալան, բայց կարող է կանգնեն եթէ րամին սիրուն մանուկները - որոնք աշխարհին էն աղոր եւ սելացի դպրոցականները կը կարծին - իհանը նեղողող մթնոլորտւն հեռու պահէնս, հեշտութեան ծաղիկը բաղնիէ անաշ ուրեմն աղաքակութեան եւ ժողովրդափրութեան ծամարին ժամըռն որայ եւ տան երկրին այն պայծառութիւնը, որ կը պակի ցայօք, աւա ու մտքով պղոտը եւ աշքերով՝ «թաճած» Փարսկասանին, որ «անտարեքրութեան ազատութեան» մէջ կենացք եւ շիսանութեան զեղումը մը ի գործ կը ունէ:

Պարսկաստանը կընայ դեռ եւս պարհողորդումներու ազգու և հաստատմիոն քայլով մը կենդանութեան ուղին դուքս սուկեց եթէ շուգեր Ասվելոյ և Խուսասնանի երկունքին միջեւ բրուիւ . .

ՄԱՄՈՒՆԴԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՔԻԿՐԴ ՑԵՂԱՊԵՏ ՄԸ

Գերմանական արևելքան միսիօնարութեան քերան
Der christliche Orient ամսագրի յունիս-յուլիսի
միացեալ թիւին մէջ գոկտօր Լէպսիուս կը նկարագրէ
իր ճանապարհորդութիւնը Հայաստանում և, իմֆջի այլոց,
իր մէկ տեսակցութիւնը Ըերնախի շէլիս-աղայի, Սօր ՄԵՀ մէտ
աղայի Տետ, տալով նոյնպէս անոր լուսանկարը: ՄԷՀ մէտ
աղան, որ կ'իշեն Միջագէտքի և Վանայ նահանգին
միջեւ տարածւած երկրին վրայ, այդ կողմերու ամենա-
հզօր ցեղապետն է և միակ քիւրդ շէլիսը, որ հակա-
ռակ կառավարութեան բոլոր ջանքերուն՝ մերժեց „Հա-
թիսիյէ“ գրւիլ Ըահեկան կը համարինք բերել հո-
քանի մը քաղաքածներ:

«Հաղիւ թէ հովիտը ձգած էինք՝ դաշտի մէջէն երկու փառորներ եկան սրացաւ, ճանապարհը կտրեսին եւ

անոր մէկ դարձւածքին քով մեր առջեւը ելան: Կեցուցին մեզ եւ մնաք կանգ առինք:

«Ո՞ւր կերթան ասոնք»)՝ հարցող ճիշտություն մէկը
մեր զավթիչներն ու «Ծատախն»; «Ովքե՞ր էք դռւք»; «Կա-
ռավարութեան պաշտօնեաններ», սաեւ մեր մարզը; «Պաշ-
տօնեաններու ճանապարհը ար չէ, պաշտօնեանները
թիթլիսի եւ Սղերդի վրայով կ'երթան»; «Հիգնութինները
այս ճամբան ընտրեցին»; Զիաւորները խուզարկեցին մեզ
«Ո՞ւր ճանդիպեցաք քէօչէրներուն» (թափառաշըջին
քրդեր); Բացատրութիւն տևինք այս մասին Արդարեւ-
մեր ճաղորդումը թէ ճամփայինները միայն օրւան մը-
ճանապարհ հեռու վրան զարկած էին չեղեց մեզմէ
ուշադրութիւնը երկու ճիւալորներուն, որոնք քրդերէն
կը խօսէին իրար հետո Մանրամասնօրէն տեղեկացան
վրաններու թւին ու տեղին «Որո՞ւ կը պատկանիք»;
հարցուցինք մենք; «Մ'նք Մուհամէտ աղայի մարդիկին
ենք»; Զիաւորները ցած ձայնով խօսակցեցան իրար
հետո «Գնացէք ձեր ճամբան, սէլամ ալէքրում»; Քայ-
ղաքավար ողջոյնով մը իրենց ճիերը քլեցին եւ քանի
մը ակնթարթ յետոյ անհետացան անտառապատ տա-
րածութեան մէջ;

Յաջորդ առաօտա, երբ մնաք ուղեցանք տեսնակի Սօր-
Առաջանձու աղայի հետ, աղան ընդունեց մեղ իր ընդու-
նարանին մէջ. Մենեակին երեւք կողմը երկար բազմոց-
ներ փուած էին. Մէկ անկիւնք նատած էր աղան, որ
ոտքի ելաւ եւ հրաւիրեն զիս միւս անկիւնք տեղ բռնել.

Համբարիչէներու մստին խօսք բացաւ։
Մեղի դիմելով՝ հապառութեամբ ու արհամարհան քով
հարցուց. «Երկրէն անցաք, զիւլեր գտա՞ք»։ — «Ո՞չ»։
«Յանքեր ու պարտէղներ գտա՞ք»։ — «Ո՞չ»։ «Մար-
դեր գտա՞ք»։ — «Ո՞չ երկիրը մարդագուրկ է եւ ամայա-
ցած»։ «Փիսէ՞ք ով ըրաւ այս այս շուն համբարիչ-
ներն էնն երեք տարի առաջ էր, ինչպէս զիտէք որ
հայերու արինը հոսեցաւ, մարդիներու երամի մը պէս
եկան հիւսիսէն եւ ամբողջ երկիրը լափեցին եթէ ես
պարսպի մը պէս անոնց դէմ չկննայի ամբողջ երկիրը
մինչեւ Բաղդադ անապատ պիտի գարճէնն . . . Բայց
ովքէ՞ր են այս համբարիչէները, մէջ բերաւ նա Ներէ
սուլթանին պատիւը շլնէր, ես զանոնք յարդի շւեղերի
պէս քշած կը լինէի»։

Յետոյ տեղիկութիւն տւաւ՝ թէ ինչպէս քէօչէռները քրիստոնական ամէնէն արհամարտած ցեղն էին առաջ։ Ամէն տարի Մուսթաֆա փաշայի ցեղը իր սահմաններէն անցած էր և չէր համարձակած մարդերու կամ հօտերու վրայ յարձակիլ Բայց այն օրէն, երբ սուլթանի գինուղիները դարձան եւ ամենալաւ հրացաններով զինուցան, այն օրէն, երբ Մուսթաֆա փաշան հայ գիր զերու կողոպարտառովը հարստացած ու ամբողջ երկիրը ամայացուցած էր, անոնք երկրին տէրը լինել կարծած էին։ Սկսած էին նատակեաց քիւրդ ցեղերու հետ կափ բռնիլ եւ չէին քայլուր նոյնակ քիւրդ թալանելէն Ես իմ երկրիս մէջ, ըստ Մէնմէտ աղան, ունիմ քրիստոնեայ եւ մահմէտական գիւղեր Աստմք բռորր—հայ, ասորի, եզիդի, արաք եւ քիւրդ—իմ զաւակներս են, եւ եւ անոնց հայրն եմ ու չեմ համերիր, որ անոնց մէկ մազին անդամ լիսան համափոք։ Եւ իրողութիւնն էլ այս կու Մէնմէտ աղան իր քրիստոնիայ գիւղեր համբարչէներու յարձակումներուն դէմ պաշտպանեց եւ եզիդի գիւղի մը կողոպուտին պատճառով կուփ բռնեցաւ Մուսթաֆա փաշային հետ որովհետեւ իր բռողքները Պօլիս մինսկի մեացին Հետզհետէ գործը լրջացաւ ու քիչ մնաց, որ քրիստոնական պատերազմը մը պայթէրու Ովիս—այսպէս վերջացուց Մէնմէտ աղան—Եթէ այս Մուստաֆա փաշան հանդարտ չկիենայ, մենք մինչեւ մահ պիտի կուինք իրար հետ եւ կամ անոր ցեղը կը մնայ կամ իմաւ նա այլեւս չպիտի համարձակի իմ երկրէն անցնելու։ Այսպիսով լուսարաննեցաւ մեր երկեւան հանդիպումը երկու ձիւուրներուն Անոնք աղային սահմանապահներն էին, որոնք կը համբարիչէները իր սահմանները չմոնեն։ Իր 5000 պատերազմիկներով աղան մինչեւ հիմա միշտ աղջմած

էր համիսից էներուն։ Մենք յետոյ ձեզիրէ իմացանք,
թէ ինչան զինագուլ եղած էր երկու մահացու թշ-
նամիներու միջեւ։

Ի՞նչ է պատճառը, որ Մշնմէտ աղայի գիւղերը ապահով կ'ապրին, որ այս գիւղացիները երկիրը կը մշակնեն ու կը հնձեն, այդիներ ու թզենիներ կը անկեն ու երջանիկ կեանք մը կը վարեն — Որովհետեւ «պաշտօնեաներու ձանապարհը այս չէ», որովհետեւ հոս թիւրք է փէնտիներն ու հարկանանմաները գործ չունին Ալղան անձամբ կ'որոշչ իր գիւղերու տուրքերը եւ կառավարութիւնը ֆեննիկ մը աւելի կամ պակաս չի առներ»:

* * *

Սեղ Հազորդում են Փարիզից, տեղեակ աղքաւրից,
հետևեալ ուրախալի նորութիւնը. — Նոյեմբերի վեր-
ջերից սկսած Փարիզում լոյս կը տեսնի, ֆրանսե-
րէն լեզուով մի նոր լրագիր՝ *Prix Armenia* անունով,
նւիրաւած հայոց հարցին և նրա պաշտպանու-
թեանը ներօպայում: Լրագիրը կը հրատարակի երկու
շաբաթը մի անգամ: Այդ նոր օրդանի յաջողութիւնը
ապահոված կարելի է համարել քանի որ նրան պիտի
մասնակցեն երօպական անպիսի հոգակաւոր հրապա-
րակագիրներ, ինչպէս՝ ծօրժ կլէ մանսօ, Անատօլ-
ի բանս, Փան Ժօրէս, Փրանսիս դը Պրէս ասնսէ,
Ուրեն Գոհիէ և ուրիշներ: Լրագրի խմբագիրն է
Հայոց հասարակութեան ծանօթ ֆրանսիացի գրող Պիէռ
Քիառուս: Մանրամասնութիւնները հետևեալ համարում:

P *b* *r* *p* *o* *t*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻՁԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ
(ԿԱՄԱԿ ՓՐԱԽՍՏԱՑԻՑ)

Համաշխարհյախն ցուցահանդէսը, որ բնականաբար
պիտի գրաւէր ամեն երկիրներից այցելուներ, յարմար
առիթ էր ներկայացրել բազմաթիւ ընկերութիւնների
և կազմակերպութիւնների համար համաժողովներ հրա-
փրեցու Փարիզում։ Հաշիւը պարզ էր, ուստի և յաջո-
ղութիւնը, ամենամեծ մասամբ, կատարեալ եղաւ։ Գի-
տութիւն իր բազմաթիւ ձիւղերով, արչեստներ, տեխ-
նիկա, հաղորդակցութեան միջոցներ, մամուլ բարեգոր-
ծութիւն, գլուխ և հասարակական միջազգային բազմա-
տեսակ հիմնարկութիւններ՝ յուշիս ամսից սկսած մինչև
հոգտեմբերի կէսը՝ ցուցահանդէսի դաշիճներում կամ-
Փարիզի այս կամ այն մասերում՝ ունեցան իրենց բազ-
մամարդ համագումարները։

Մի առանձին տպաւորութիւն էին գործում երկրագնդի զանազան ծայրերից, զանազան ազգութիւնների ներկայացուցիչներից բաղկացած այդ ժողովները: Որքան և յոռեալես լինի մարդ, չէր կարելի այդ ժողովներում չնկատել, թէ որքան առաջադիմում է տարեցտարի մարդկային ընդհանուր համերաշխութեան գաղափարը և աճում զգեցզանում է „մարդու“ կուլտը ընդհանրապէս՝ ընդդէմ՝ շօվինիստական նեղ հակումների ձապօնացին գերմանացու հետ, Արդենտինեան հանրապետութեան քաղաքացին ֆրանսիացու հետ, նօրիգիզացին Աֆրիկայի արարի հետ, Ամերիկայի եանկին բուլղարացու հետ, իտալացին հայի հետ, անգլիացին ռուսի կամ իռլանդացու հետ — բոլորը այդ համաժողովներում իրար հասկանում, իրար ծափահարում, իրար մօտենում

և մի բոպէում այցետոմսերը փոխանակելով՝ բարեկառում են ցմահ։ Համաժարդկային ընդհանուր պէտքերի ներկայացուցիչներ են գոքա, որոնք՝ թէև զանազան միջավայրերի ծնունդ, բայց գիտութեան և գաղափարի, արդարութեան և քաղաքակրթութեան միևնոյն պահանջների ազգեցութեան ներքոյ, հետաքրքրութեամ են այսօր միևնոյն հարցերով տանջութեամ են միևնոյն ցաւերով։ Եւ երբ մի բոպէ երևակայում էր, թէ հետաշետէ որքան աննշան են դառնում ազգերին և պետութիւններին իրարից բաժանող շահերը այն մեծաքանակ շահերի դիմաց, որոնք ընդհանուր են դրանց համար, դուք լցում էք ամենաջերմ հաւատով գեպի մարդկութեան ապագան։ Քաղաքակրթութեան վիճիւրի նւազութեամ երը մեր օրերում արդէն յետ են մղում անցեալ և ժամանակակից պատմական կեանքի զիմսաւոր պայմաններից մէկը — փոխադարձ մրցման սկզբունքը անհատների ու ազգերի մէջ, և դուք պարզ նկատում էր՝ թէ ինչպէս խոր, տգէտ, կենդանական բնազդներով և անշարժ տրադիցաներով ապրող իներտ ժողովուրդների ու նրանց վայել կառավարութիւնների կողքին՝ աճում է գիտակից հասարակական մի հոսանք, որը ժամանակի ընթացքում՝ մի կողմից բարձրացնելով ամրութեամ միւս կողմից ուղղութիւն տալով կառավարութիւններին, պիտի իրականացնէ վերջապէս մարդկային համերաշխութեան, ընդհանուր մարդկային համաշխարհային հանրապետութիւններում ապրում է այդ կառավարական կուսակցութիւններից գուրս նաև բազմաթիւ ուրիշ հիմարկութիւններ և որոնք ունեն արդէն իրենց գրականութիւնն ու պարբերական հրատարակութիւնները։ Համաշխարհային համար հանրապետութիւնների բարձրագույն մեծաքանակ մողովուրդների վրայ — ահա ապագայ մարդու անունը ուր և ապրում, ինչ ազգութեան և պատկանում լինի նաև Սակայն ո՞րչափ դառն է այդ հմայիչ հեռանկարի առջև այն իրականութիւնը, որի մէջ զեր ևս ապրում է մարդկութիւնը։ Բիօլոգիական անհաշտ, սոսկալի կորի և վաշխառուների ու փոքրաթիւ աւազականքետների բացարձակ իշխանութիւն մեծաքանակ մողովուրդների վրայ — ահա այդ իրականութիւնը։ Եւ ոչ ոքի համար գուցե այնքան ակներեւ չէ այդ հակասութիւնը, որքան ներկայ օրերում ապրող մի հայ-մարդու համար ինչպէս ամերիկական հաւասարութեան և եղբայրութեան բուռն պահանջ ու միաժամանակ 300 հազար մարդկային արարածների ջարդ-թուրք ժողովորդի աչքի առաջ, նրա հարազատ զաւակների ձեռքով և նրա ապառն թեան վրայ յենաւծ մի մարդ-անասունի հրամանով — որչափ հակառակ պատկերներ։

“Բայց չէ։ Մենք այսօր Յամկաստանումը չենք, այլ Փարիզում, մենք այսօր Արևելքի տիպիական աշխարհումը չենք, այլ առաջադիմութիւնը Արևմուտքում, ուր՝ ի միջի արևելք գիշատիչների՝ ժողովւած են նաև համաշխարհային ինտելիգենցիայի ներկայացուցիչները և ուր անշուշտ կը լինեն մեզ լող-հասկացողներ” — խորհում ենք մեր մէջ մի քանի հայեր և նետում մի քանի համաժողովներ։

ՍՈՑԻԱԼԻՍՏ ՈՒՍՆՈՂԱԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սեպտեմբերի 18-ին բացւեց սօցիալիստ ուսանողների

միջազգային համաժողովը, որին՝ ուսանողների կողմից եղած հրաւերի համաձայն, հերթով նախագահում էին Էնրիկո Ֆէրրի, ծորէս, վանդերվելցու։ Այդ ժողովներից մէկում մի ուսանողի կողմից առաջարկութիւն եղաւ համաժողովին՝ համակրութիւն յատնել տաճկական լծի տակ գեգերւող մակեդոնացի, հայ և ուրիշ ժողովուրդների հասցէին։

— “Կորչի սուլցթանը”, ակորչի Կարմիր գաղանը”, միաբերան աղաղակներով և անվերջ ծափահարութիւններով ընդունեց առաջարկը զանազան ազգութիւնների պատկանող և ներօպարի զանազան համալրարաններից խմբւած երիտասարդութիւնից։

ՄԻՋԱԶԳԱԾԱՅԻՆ ԴՊԲՈՑ

Յուցահանդէսի մէջ՝ գեղարւեսաների շինութեան ներքին յարկում՝ իմիջի պլոցը մի ըսարան է յատկացւած ցուցահանդէսի այցելուներին ամեն էբդուներով դասախոսութիւններ կարդալու համար։ Վաճառականութեան և արդիւնաբերութեան մինիստրի հովանաւորութեան տակ կազմւել են զանազան ազգերի ներկայացուցիչներից առանձին մարմիններ, որոնք և կազմւակերպում էին այդ գասախօսութիւնները՝ աշխատելով շօշափել ամենաբազմակողմանի նիւթերու Ահա այդ գպրոցի ուսւաց բաժնում, որը զեկավարում էր յայտնի սօցիօլօգ պրօֆէսուր Մաքսիմ Կօվալէվսկին, սեպտեմբերի 19-ին՝ պ. Ք. Միքայէլեան ուսւաներէն լեզով կարդաց մի գասախօսութիւն՝ “Հայկական հարցը Թիւրքիայում”։ Այդ դասախոսութիւնը հետաքրքիր եղաւ մանաւանդ նրանով որ առիթ տւեց հայերի մասին խօսալու նաև պրօֆէսուր Կօվալէվսկուն։

Դասախոսը՝ ծրագիր ունենալով — հերքել այն բոլոր անհեթեթ կարծէքները, որոնք Ուսւաստանում եւ եւրոպայում արտայալուում են հարկական հարցը մասին ու պարզել ննդրի իսկական բնոյիցը և այժմեան դրութիւնը — վերջացրելոց իր գասախօսութիւնը հետաքրքիր եղաւ մանաւանդ նրանով։

“Թիկիններ և պարտներ, Եթէ իմ ասածներով ես կարողացաւ թէկուզ մի ամենալնդ հանուր գաղափար տալ ձեզ հայկական հարցի մասին, ես կիջնեմ այս ամբոխնից միանդամայն գոհ սրտով։ Այդ գէպքում ես յոյս կունեամ, որ ամէն մէկդ ձեր շըջաններում, երբ այդ կը պահանջւի, համարձակ կերպով կը բացականացաւ թէ ինչպէս ստեղծւեց հայոց հարցը, ինչո՞ւ համար են հայերը կռւում, ինչո՞ւ համար են նրանց մորթում և ո՞վ է մեղսակիցը կարմիր սուլթանի իրադրութելու նրա հրէշաւոր ծրագիրը — պատել ամբողջ Հայաստանը մահւան, անվերջ տանջանքների և ընդհանուր ամայացման սկ քօղով Ես յոյս կունենամ նոյնպէս, որ եթէ այդքան ծանր պայմաններում, անհաւասար կռւի մէջ՝ հայերին վիճակի մեռնել գուք ձեզ պարտայուր կրզդաք բարձրաձայն պատմելու ամենքին՝ թէ ինչու մեռան հայերը”..

Բուռն ծափահարութիւններ։

Վերջին խօսքերն էին, որ առիթ տւին պրօֆէսուր Կօվալէվսկուն պ. Միքայէլեանից յետոյ ամբոխ բարձրանալ։ Յայտնելով իր շնորհակալութիւնը դասախոսին՝ յարգելի պրօֆէսուրը մի տաղանդաւոր ճառի արծեց այն միտքը, որ հայերի թէ անցեալու թէ ներկան ընդունակ են ներշնչելու զերմ հաւատա-

Նաև գէսիփ նրա ապագան: «Հայերը չեն մեռնի և չպիտի
մեռնեն—ահա այն գիտակցութիւնը, որ հետզհետէ
աւելի լայն նւաճումներ է անում թէ ոռւսաց ինտէլի-
գէնտ շըջաններում և թէ եւրօպական հասարակական
կարծիքի մէջ»: Եւ այս իր միտքը ապացուցանելու հա-
մար՝ նա մտաւ հայոց պատմութեան մէջ, յիշեց այն
բոլոր քաղաքակիթական ծառայութիւնները, որոնք
հայերը մատուցել են մարդկութեան և մանաւանդ
Արևելքին, պատմեց իր անձնական գիտողութիւնները
ժամանակակից հայոց կեանքի մասին, մատնացոյց արեց
որոշ հասարակական հոսանքներ, որոնք կազում են
յօդուտ հայերի, և վերջացնելով իր խօսքը, դարձեալ
շեշտեց, որ՝ «նոյնիսկ արժմեան ծանր պայմաններում՝
հայ ժողովուրդը հեռու պէտք է պահի իրեն ունէ
յուսահատութիւնից»...»

Ագեորւած և բուռն ծափահարութիւններ:

ՄԻԶԱՋԻԱՅԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱՔՊՂՈՎԸ

Մենք ըստունել ենք ժողովների գահինքը առանձին տոմսակներով իր մամուլի ներկայացուցիչներ՝ “Դրօշակի” խմբագրութիւնից ստացած արտօնութիւնով

սողովին օրակարգի 4-րդ կետը վերաբերում է „Մեջ-
ազգային խաղաղութեան” և մենք՝ տանչւած, կոտորւազ
հայ ժողովը զաւակներս՝ իրեւ բողբողներ սուլթա-
նական ուժիմի և այդ ուժիմի յարատենութեան մեղ-
սակից բուրժուազական եւրոպայի գէմ, վճռում ենք
մեր խնդիրը ևս համաժողովի ուշադրութեանը առա-
ջարկել. չէ՞ որ դա ո՞հայկական հարց “անունով
յայտնի այն խնդիրն է, որ հենց մի քանի տարի
առաջ հարիւր հազարաւոր զոհերի անմեղ արիւնով
խանդարեց խաղաղ ու թիւնը Հայաստանում.
չէ՞ որ դա այն խնդիրն է, որ այսուհետեւ ևս մշտա-
կան սպառնալիքների աղքիւր պէտք է լինի խաղա-
ղ ու թիւն մեծ գործի համար: Այս նպատակով դիմում
ենք համաժողովի բիւրօյին: Մեզ բացատրում են,
որ ծրագրի իւրաքանչիւր կետի համար բոլոր ազգու-
թիւնների ներկայացուցիչներից ընտրւած առանձին մաս-
նաժողովների գործն է՝ քննել նաև այժմէութիւն ունե-
ցող նոր առաջարկներ և համաժողովին ներկայացնել:
Հարցնում ենք մասնաժողովի նախագահի անունը Գա-
լայիանն է, արդէն սպիտակահեր, բայց հոգով զեռ-
երիտասարդ Վայիանը որը սօցիալիստական գաղափարին
մատուցած իր ծառայութիւնների հետ յայտնի է նաև
իրեւ 1870 թւականի Կօմմունայի հերոսներից մէկը:
Վայիանը՝ ուրախութեամբ յանձն առնելով մասնաժո-
ղովի առաջ զնել մեր խնդիրը, հաղորդում է մեզ նաև՝
թէ երբ է լինելու 4-րդ մասնաժողովի նիստը, և հրա-
ւիրում է մեզ անձամբ ներկայ լինել. այդ նիստին ու
պաշտպանել մեր առաջարկը:

Սեպտեմբերի 26-ն է։ Ճաշից յետոյ մենք սերկայանում ենք 4-րդ մասնաժողովի նիստին, որը, ինչպէս և միւս մասնաժողովները, պարապում է սրահի երկրորդ դաշլիճնում և որը գումարթած է արդէն առաւտօտեան 9 ժամից։ Ժամը 4-ին մասնաժողովը վերջացնում է իր քննելի խնդիրները, և նախագահ Վայրիան առաջարկում է կարծիք յայտնել Հայկական կոտորածների, Հայկական հարցի մասին։ Մասնաժողովի անդամները ընդհանուր կերպով փոխանակում են իրենց կարծիքները և ապա խօսք են տալիս մեզ, որպէսզի Հասկանան այն կօնկրէտ առաջարկը, որ մենք կուգենայինք անել ժողովին։ Խօսում է մեր ընկեր Վարդանեանը։ Մասնաժողովը՝ վճռելով օրակարգի մէջ մտցնել Հայկական հարցը միացնում է դրան նաև իր բողոքը լեհացիների, ֆինների և բօերների վերաբերյամբ գործադրուող ձնշումների դէմ։ Անմիջապէս խմբագրում են ընդունւած վճիռները և Հայաժողովի մէջ ևս խօսելու իրաւունքը։

Համաժողովը այդ օրը ամբողջապէս զբաղւած է այն ամենատաք խնդրով՝ որ բոլոր ժամանակ յուզում եր ժողովականներին — այն է Զ-րդ, կամ, ինչպէս ասում էին — «մինհստրական» խնդրով (**Միլիերանի առիթով**):
Հետևեալ օրը ճաշից յետոյ միայն ժողովը կարողացաւ անցնել միւս հերթական հարցերին: Նախագահում է Վան Կօլի ժամը 2-ից ծեծւում են գաղութային և զինւորականութեան խնդիրները: Ահա վերջապէս ժամը 4-ն է: Նախագահը սաստիկ շտապում է, որովհետեւ այսօր վերջին օրն է և 2-3 ժամից յետոյ պէտք է փակի ժողովը, այն ինչ գեռ սեղանի վրայ են ծովային աշխատանքների կազմակերպութեան, ընդհանուր գործադուլի, լնկհանուր քուեարկութեան և ուրիշ

լուրջ խնդիրները ։ Ճնշւած ազգերի վերաբերմամբ ընդունւած առաջարկների մասին նա խօսք է՝ տալիս ոչորի և ինքը կարդում է միայն մասնաժողովի բանաձևները։ Խողիրը այնքան պարզ է, չամայն աշխարհում բոլոր հալածւողների վիճակը այնքան մօտ է սօցիալիստական կուսակցութեան սրտին, որ ժողովը հաւանութիւն է տալիս նախագահի ընթացքին և բուռն, չամերաշնչափահարութիւններով ընդունում ու վաւերացնում է մասնաժողովի վճիռները։ Այս հայերի վերաբերմամբ ընդունւած առաջարկը.

ԱՕՑԻԱԿԱԾ ՄԱՄՈՒԿԻ ՄԴԱԶԳԱՑԻՆ ՀԱՄԱՔՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 1-ին ցուցահանդէսի մէջ մամուռին յատկացրած առանձին դահլիճնում բացւեց սօցիալիստական մամուռի առաջին համաժողովը։ Ծորովականների մեծ մասը բաղկացած է Նախորդ Համաժողովին մասնակցող սօցիալիստ գրողներից։ Ճողովը բաց է անում սօցիալիստ հրապարակախոսների սինդիկայի ընդհանուր քարտուղար Ա. Ֆակիեար, որ թէև արդէն ծեր, բայց իր պատասխան աշխարհով, զգացմունքների թարմութեամբ և գաղափարական հոգով՝ հմայում է հանդիսականներին։

„Դրօշակի“ խմբագրութիւնը պաշտօնապես հրատիր-
ւած է մասնակցելու այս համաժողովին:

Ճողովի օրակարգը վաղուց արդէն պատրաստ է:

Նրա ծ-րդ կէտը, ուր խօսւում է սօցիալիստ մամուլի գերի մասին ընդհանուր խաղաղութեան և արտաքին քաղաքականութեան խնդիրներում, ազատ ասպարեզ է բաց անում նաև Հայկական դատի համար։ Այդ ժաման վաղօրոք մենք արդէն յայտննենք Համաշխառող կազմակերպող կարգադրիչ մասնաժողովները ընդունել է նաև մի գրաւոր գեկուցում։ Տաճկաստանի մասին Ասրուել լրագրի աշխատակից և մեր բարեկամ՝ Պիեռ Քիառից։

Համաժողովի երկրորդ և վերջին օրն էր, երբ չերթը
հասաւ օրակարգի 5-րդ հարցին։ Այդ օրը ժողովին
նախագահում է Անդրէա Կոստա, իտալական յայտնի
սօցիալիստ և պարլամենտական գործիչը։ Պ. Քիառի
բացահայտութեան պատճառով նրա զեկուցումը ներկայա-
ցնում է ժողովին պ. Ժակենարը և ժողովը ծափահա-
րութիւններով ընդունում է Պ. Քիառի առաջարկները։

ԱՀԱ ՊՐԱՆՔ.

1. „Համագործը հրատէր է կարդում միջազգային սովորական մասնակին հրապարակ հանուլ ամենաշախան ժամ ժամանակով այն սարսափելի կոտրածները, որոնք կազմակերպուած էին սովորակ Համբիցի ձևոքով՝ հայ ժողովուրդը ջնջելու համար. հրապարակ հանուլ ընդհանրապէս եւ այն եղեռնագործութիւնները, որ այս միապատր կատարել է իր պետութեան մէջ գտնող

զանազան ազգութիւնների դէմ աշխակից ունենալով
բարեփուա կառավարութիւնների հաւանսութիւնը:

2. Սոյփախստական մամուլը կ'աշխատի առաջ բերել մնեց պետակի հնութիւնը, միջամտութիւնը, որը բացառապէս ուղղված լինի սուլվանի դէմ, որպէսզի Տաճկաստանում հասաւատի մի տանիչի ոչքիմ օսօմանեան բոլոր քաղաքացիների համար առանց խարութեան ցեղի, ազգութեան եւ կրօնի^ւ:

Պ. Քիառի այս առաջարկները, որքան և համակրելի լինելին ընդհանրապէս, բայց կարծես տաճկական ընդհանուր բարենորդութունների անւան տակ վարագուրում էրն զուտ ո՞չ այսկաքան հարցը — այն հարցը, որ սրբագործած է արսօր այնքան արինով և յենուում է միջազգային իրաւունքի վրայ: Հարկաւոր էր կրկին շեշտել զուտ հայկական խնդիրը, և ահա խօսք է խնդրում մեր ընկեր Վարդանեանը ու արտասանում:

“Քաղաքացիները, ուշաբ Եւղափոխական Դաշնակցութեան” օրդան դՊօշակի “խմբագրութեան կողմից պատիւ ունիմ ողջունել սոցիալիստական մամուլի առաջին միջադարյան համագումարը: Խրես մէկ անդամ այս կազմակերպութեան, որ տասը տարուց ի վեր կուիւ և մղում ասիական ամենապժգալի բռնապետութեան դէմ, ես այս ամրիտնն եմ բարձրանում ոչ թէ Հայ ժողովրդի տառ ապանքները նկարագրելու կամ նրա դատը փաստաբանելու: մը վիճակը իր անօրինակ ողբերգական իշշառութեամբ ձեզ ծանօթ և արդէն: Ես դալիս եմ ձեր առջեւ բարձրաձայն յայտարարելու, որ Հայկական կուիւ յարատեւումը մշտնջնական վտանգ է միջազգային խաղաղութեան համար, որովհետեւ այդ կուր պէտք է շարունակվի՝ Հակառակ պետութիւնների ջանքերին՝ պահպանելու տևան զաՅ: Այս թէ ինչու սոցիալիստական մամուլի միջազգ ային համաժողովը իր ձեռքն առնելով Հայկական դատիւ պաշտպանութիւնը, ոչ միայն կը վարւի համաձայն արդարութեան ու Համաշխարհային միարանութեան, այլ և միանգամայն կը նպաստէ գործնական մի խնդրի լուծման, — նա կո նապատէ խաղաղութեան գործին:

„Ամէնքդ էլ գիտէք, բալապացիներ, որ մի քանի
շաբաթ առաջ Պօլսոյ Մհեծ Մարդասպանը իր գահա-
կալութեան 25-ամեակն էր տօնուա, որ ջատագովորմն
էր իր սպանութիւնների. գիտէք և այն, որ այդ
հանդիսաւոր տօնախմբութեանը Խւրօպայի գահակալ-
ները ևս աճապարեցին մասնակից լինել: Մեր գա-
հիձների արդ սրտաշարժ համերաշնութեանը պէտք
չէ՝ արդեօք ընդդիմադրել նրանց զոհերի համերաշ-
նութենք. . . (Ժափանարութիւններ):

ս Արքան ուղախացանք մենք, երբ միջազգային սօցիալիստական համաժողովը իր վերջին նիստում պարտը համարեց իր ջերմ, սրտագին համակրանքը յայտնել հայ ժողովրդին, պարտաւորեցնելով միաժամանակ պարլամենտների սօցիալիստ կուսակցութիւններին՝ միջամտել ամէն առիթով՝ յօդուած հայկական հարցին Աւրախին Ենք, որ ներկայ համաժողովը ևս ընդունեց համարեա նմանարինակ մի որոշում: Այս քաղաքացիներ, սօցիալիստական մեծ կուսակցութեան անհրաժեշտ պարտականնութիւններից մինն է՝ ընդարձակ և անդադրում պրապագանդ մշել ի նպաստ հայերի՝ հանդեպ այն հսկյական ողբերգութեան, որ խաղացւում է Հայաստանում: Ասագէք ամէն տեղ

ձեր ժողովներում և ամբողջ աշխարհի սօցիալիստական մամուլի մէջ որ կայ մի ժողովուրդ մօտ Արևելքում, երբեմն խրախուսւած այժմեան Երօպակից, ապա վերստին մատնւած մի մարդակեր հրեշի անգժութեանը։ Պատմեցէք ամէն տեղ այդ հրեշի ոճիները, որոնք գերազանցում են նոյնիսկ Լանկթամուրների ու Զինգիսանների սիրադործութիւններից, և արձագանք տալով մարտնչող հայ երիտասարդութեան ձայնին, թոյլ մի տաք, որ ժամանակակից գիշատիչների ձեռքով բնաշխնջ լինի ազատութեան ու քաղաքակրթութեան ձգտող մի հին ժողովուրդ— հայ ժողովուրդը։ . . .

Բուռն ծափահարութիւններ. . .

ՄԱՐԴԿԱՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Այս Համաժողովը, որի նիստերը տեղի էին ունենում „Գիտնականների ընկերութեան“ հիւրանոցի դահլիճում (Սեռապանտ փողոց), ամենաերկարատև Համագումարներից մէկը եղաւ։ Նա տեսեց սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 5-ը՝ շօշափելով բազմաթիւ խնդիրներ հանաց հարցի, հասարակական տնտեսութեան, առողջապահութեան, բարոյականութեան, հարազարակախօսութեան, կրթութեան և լուսակից ժողովներին նախագահում էր կոմս Դը-Փօֆեր, փոխ-հիւպատոս, „Դիւանագիտական նամակներ“ հանդեսի խմբագիրը։

Ինկատի ունենալով այն մարդասիրական նպատակները, որոնց անունով ժողոված էր այդ համագումարը, մեր հայրենակից պ. Առաքելեան, իրքն ժողովի անդամ, արտօնութիւն ստացաւ համաժողովի բիւրօնից՝ մի զեկուցում անել նաև տաճկահայերի դրութեան մասին։

Հոկտեմբերի 4-ին պ. Առաքելեան կարդաց իր զեկուցում՝ „Հայերի վիճակը Թիւրքիայում“ վերնագրով։ Առենարանը՝ համառօտ կերպով ծանօթացնելով համաժողովի անդամներին հայ ազգի և նրա պատմութեան հետ, անցաւ նկարագրելու այն սարսափելի վիճակը, որի մէջ այդ ազգի մեծագոյն մասը գտնւում է Թիւրքիայում։ Նա յայտնեց, որ Թիւրքիայի ներկայ սուլթանը, կամենալով վերջ տալ հայոց հարցին և արգելել պետութիւններին միջամտելու Թիւրքիայի գործերի մէջ հայկական հարցի առիթով, յղացել է մի դժոխային միոք— կատորել ջնջել ամբողջ հայ տարրը, մտածելով որ երբ այլևս հայ չմնայ, հայոց հարց ևս չի լինի։ Իր այդ դժոխային ծրագրը սուլթանը գործադրում է ամենայն աղողութեամբ 1894-իդ սկսած, կազմակերպելով նաև ընդհանուր կոտորածներ և այժմ, շարունակ սրար, մանակի կոտորածներ։ Երբեւ ապացոյց, ատենարանը կարդաց քաղաքաներ զանազան լրագիրներից վերջիր Սասունում, Սպաղանք գիւղում, կատարւած կոտորածների մասին։ Ատենարանը կոչ արեց Երօպակական հասարակութեան խղճմանանքին և հրաւիրեց համաժողովի անդամներին ու մարդկութեան բոլոր բարեկամներին ամէն միջոց գործ դնել արգելելու այսպիսի մի սարսափելի ոճիր, ինչպիսին է մի ամրող խաղաղ աշխատասէր և քրիստոնեայ ժողովը իրազնամը կոտորածի միջոցով։ մի արիւնուուշտ գազանի ձեռքով։

Համաժողովը՝ վարձատրելով ատենարանին երկար ծափահարութիւններով, միաձայն քուէարկեց հետևեալ որոշումը։

Մարդկայնութեան համաժողովը, նկատելով

1. Որ հայերը Տաճկաստանի մէջ չեն դադարում հալածենուց եւ ենթակայ են բարբարոսութիւնների ու անգժութիւնների։

2. Որ դժբախտ հայերը չեն դադարում մորթւելուց, կախելուց եւ այլեկուց։ —

Նշաւակում ու դատապարտում է այս բարբարոսութիւններին ու վալրագութիւնները եւ ցանկութիւնն է լայտնում, որ բոլոր այն մարդիկ, որոնք մարդկայնութեան գիտակցութիւն ունեն, գործեն մարդկայնութեան դէմ կատարող այս ոճիրներին վերջ տալու համար։

Մարդկայնութեան համաժողովի որոշումները ուղարկելու են բոլոր պետութիւններին։

ԽԱՎԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Խաղաղութեան համար բազմաթիւ երկնեներում գործող մարմններից կազմւած այս նիսազաղ՝ համաժողովը, համարձակ կարելի է ասել ամենաշանառաւորն էր իր կարգի հիմնարկութիւնների մէջ։ Մասնակցում էին ժողովին Գերմանիա, Արգենտինա, Բէլգիա, Դամեմարկ, Խապանիա, Միացեալ Նախանդներ, Ֆրանսիա, Անդրեցիւատանիա, Շունդարիա, Խոալիա, Սորմանադիա, Բուլղարիա, Ֆորմուգալիա, Բուլումանիա, Բուլուսաստան Սերբիա, Չվեցիա, Զւիցերիա։ Այս բոլոր երկներում ցրւած խաղաղութեան բազմաթիւ ընկերութիւնները անդամակցութեան, գործակցութեան են գրաւել գիտութեան, գրականութեան և հասարակական գործունէութեան մէջ ամենայատնի մարդիկ՝ սկսած մինիստրներից, գիւտանագէտներից, և բուրժուազիայի յայտնի ներկայացուցիչներից մինչև կարմիր գոյնի սօցիալիստներ (Փերրի, Վանդերվելդ և լա)։ Համաժողովը գործում է համաձայն միջազգային օրէնքների, նպատակ ունենալով մշակել լայնացնել այդ օրէնքները և վերջի վերջոյ ազգերի մէջ փոխադարձ գժգոհութիւնների հետևանք — պատերազմները՝ փոխարինել միջազգային միջազգային միջոցորդ գատարանով։

Ներկայ համաշխարհային ժողովը թւով թւով թւով է և, ինչպէս միշտ, ներկայ գեպքում ես կիսապաշտանական բնաւորութիւն ունի. Նա գտնւում է ֆրանսիական կառավարութեան հովանակութեան առաջնական կառավարութեան միջուկը 30-ին ֆրանսիական մինիստր Միլիերան, որից յետոյ կարդացւեցին նաև հանրապետութեան նախագահ լուսերի և արտաքին գործոց նախարար Գելիկասէի նամակները, որոնցով նրանք ցաւ էին յայտնում, որ Փարիզից բացակայ գտնւելով՝ անկարող են ներկայ գտնւելով։ Համաժողովը մասնակում է ապահովագրական կառավարութեան մասնակի կարգութեան։

Այդ ժողովին մասնակցող պ. Առաքելեանը՝ օգտականութիւն որակարգի 10-րդ կետից, որը թոյլ էր տալիս խօսելու ոչնախատենուած, հարցերի մասին, նաև քան համաժողովի բացւելը ներկայացրել էր կարգադրիչ մասնաժողովին մի յիշատակադիր ո Հայկական հարցը խաղաղութեան տեսակետից՝ վերնագրով։ Յիշատակադիրը ստորագրել է եւ 18 հոգի, որոնց թւում են 11 հայ և հետևեալ յայտնի անձնաւորութիւնները օտարներից — Պետերբուրգի գիտութիւնների ճեմարանի թղթակից-անդամ պրօֆէսօր Մաքսիմ Կովալեվսկի, Սոսկվարի ո Բուլուսակի, լրագրի խմբագիր Վ. Խօրովելսկի, Բըրեզսկի համալսարանի պրօֆէսօր Ե. Դը-Բօբերտի, համապարականուս-սօցիոլոգ Գ. Նօվիկով, միջազգային իրաւունքի պրօֆէսօր Բրիւսևսկի և Ավանտաչյան, ազգային

մէջ իրաւարար ատեան հաստատելու ֆրանսիական ընկերութեան քարտուղար՝ պրօֆէսօր Լ. Մառիլիէ, ֆրանսիական խաղաղութեան ընկերութեան նախագահ Լիւսիէն Լէ-Փուայէ:

Համագումարի այն մասնաժողովը, որ պէտք է քննէր բոլոր նոր առաջարկութիւնները, գոտաւ, որ հայկական հարցը իսկապէս կարելի է ընդունել ոչնախատեսնւած հարցերի՝ շարքը, որոնք ունեն այժմէութեան բնաւորութիւն և որոշեց ներկայացնել համաժողովին:

Հոկտեմբերի 5-ն է: Համաժողովների համար ցուցահանդսում յատկացրած ահագին դաշիճում հաւաքւած են բազմաթիւ ժողովականներ՝ և ունկնդիրներ: Նախագահում է յայտնի գիտական ֆիզիոլոգ Շարլ Ռիշէ, պատւաւոր նախագահ է ֆրեդերիկ Պասսի: Ժամը յօտաւորապէս 4-ին ճաշից յետոյ նախագահին սեղանի վրայ է դնում ։ Հայկական հարցը և հրաւիրում է պ. Նօվիկովին կարդալ ընդունեած յիշատակադիրը:

Բերենք այստեղ այդ յիշատակագրի ամփոփումը.

Հայերի գրութիւնը Տաճկահայաստանում այն խնդիրներից մէկն է, որ ամէնայն իրաւամբ արժանի է համաշխարհային խաղաղութեան ձգտող մի համաժողովի ուշադրութեան: Եւ ներկայ համաժողովը ոչ միայն իրաւունք ունի հայկական դժբախտ ինդիրը շօշափելու, այլև նա պարտաւոր է այդ անել: Իրաւունք ունի, որովհետեւ մեր խնդիրը ունէ պետութեան վերաբերող ներքին չէ, այլ միշտ ազգական գաղաքան դաշնագրի 61-րդ յօդւածով ու 1895 թվի մայիսի 6-ին մեծ պետութիւնների ձեռքով մշակւած և նոյնիսկ սուլթանից ստորագրւած բարենորոգումների ծրագրով: Պարտաւոր է, որովհետեւ խաղաղութեան նախակին ժողովներում ընդունեած վճիռների և միջազգային օրինագրում տեղ գտած 17-րդ յօդւածի համաձայն՝ Ազգերը իրաւունք ունին մի պետութեան համար. որը պատճառում է վիաս մի ուրիշն իր եկամուտները վատնելով կամ որը կազմակերպում է կամ թոյլ է տալիս իր հպատակների մի մասի կոտորած, հաստատել հոգաբարձական նորհուրդ:

Մենք չենք առաջ բերի այստեղ հայերի կրած տառապանքները. այն սպանդանոցները, որ 1894 թից սկսած սահմանւած էին հայերին մորթուածելու համար, արեան այն գետերը, որ միշտ հոսում են Հայաստանում մինչև Սասունի մերջին կոտորածը Սպալանքում—տալիս են հայկական հարցին միցաւագին այժմութիւն: Մենք չենք էլ փաստաբանի հայերի իրաւունքները, որովհետեւ բոլորիդ յայտնի է մեծ պետութիւնների խոստացած հովանաւորութիւնը մարտիրոս հայ ժողովրդին: Մենք կը պնդենք միայն, որ այն ժամանակ, երբ հայերը գիտակցում են իրենց իրաւունքները, այն ժամանակ, երբ նրանք սպանիչ մի լուծի տակ, զօկւած են գոյութեան ամենատարրական պայմաններից, բնական է, որ նրանք ստիպւած են լարել իրենց բոլոր ուժերը, որպէսզի կամ իրենց համար մի տանելի դրութիւն ձեռք բերեն և կամ ջնջեն, անհետանան աշխարհի երեսից: Եւ այս պայմաններում, պարոններ, միթէ գտնում էք դուք, որ համաշխարհային խաղաղութեան մեծ գործի համար մըշտական մի սպառնալիք չէ նաև հայկական դատը:

Բայց տեսք այդ ժողովրդին ապրելու և իր աշխա-

տանքի արդիւնքներից օգտւելու կարելիութիւն, և նա կը նվիրի Արևելքում քաղաքակրթութիւն տարածելու իր պատմական կոչման: Աւելի հեղինակաւոր ձայներ, քան մեր ձայնն է, ձեզ կը հաստատեն, որ այս ժողովուրդը իր անցեալով, իր տրադիցիաներով և ընդունակութիւններով միանգնած կանգնած է այն բարձրութեան վրայ, որը համապատասխանում է այդ կուլտուրական դերին, և որ նա ամէն անգամ, երբ նրան թողել են մի փոքր հանգիստ, նա ամենայաջող կերպով քաղաքակրթութեան միջնորդ է հանդիսացել լուսաւոր Արևմտաւոր Արևելքի միջև: Բայց չէ. մեր նպատակը չէ մի կոչուզել դեպի ձեզ. ներկայ խաղաղութեան համաժողովի ինամակալ կօմիտէի ցանկում մենք տեսնում ենք բազմաթիւ անձնաւորութիւնների անուններ, որոնք Փրանսիայում և ուրիշ երկիրներում խօսքով ու գրչով բարձրաձայն արդէն վկայել են իրենց համակրութիւնը դեպի մեր դժբախտ ժողովուրդը: Մեր ցանկութիւնն է, որ այժմ, երբ այդ բոլոր անձնաւորութիւնները ժողոված են այստեղ, միացեալ ուժերով և աւելի ջերմ քան երբեկցէ, գծագրեն որոշ դիմումներ և ջանքեր, որոնց նպատակը լինի ներգործել կառավարութիւնների ու հասարակաց կարծիքի վրայ և ազտաել վերջապէս հայ ժողովուրդը իր ներկայ վիճակից:

Զեկուցումը կարգալուց յետոյ Պ. Նօվիկովը առաջարկեց համագումարին հետեւեալ որոշումը, որը մշակել էր զեկուցումը քանի մասնաժողովը.

Խաղաղութեան 9-րդ համաշխարհային ժողովը, ծանօթանալով պայ. Գամբարիանի, Կովակեվակու, Սօվոլեվսկու, Լամօնոստէնի, Դր-Ռոբերտիի, Նօվիկովի, Լիսիկին Լէ-Ֆուայէի, Առաքելյեանի, Լորիս-Մելիքեանի եւ ուրիշների յիշատակագրին, կարծիք է յայտնում, որ հայերի կոտորածները ներկայացնում են վերջին ժամանակներում կատարւած ամենագարշելի ժործերից մէկը: Համաժողովը յայտնում է իր համակրութիւնը այս դժբախտ ժողովրդին եւ փափաքում է, որ տաճկական կառավարութիւնը հարկադրի յարգել հայերի անժխտելի իրաւունքները, որոնք երաշխառուած են բերլինի դաշնապողով:

Համաժողովը միաձայն ընդունում է այս առաջարկը: Բայց ահա խօսք է խնդրում նախագահից ուսու յայտնի փիլիսոփայ ու սօցիօրդ Դր-Ռոբերտիին, մի շատ յարգւած անձնաւորութիւնն, և դիմում է ժողովին հետեւեալ ազդու խօսքերով, որ մենք բերում ենք համառօտակի:

Այս դժբախտ հարցը, որ յայտնի է ոհայկական հարց՝ անունով, ինձ թւում է, որ պահանջում է մեղանից աւելի խիստ որոշում, քան մասնաժողովի կողմից մեզ առաջարկածը: Ինձ թւում է, որ խեղճ Հայաստանը, ինչպէս միշտ, ներկայ դէպքում ևս զուում է այժմէութիւնն ունեցող բօերական և չինական այն երկու հարցերին, որոնցմով մենք զբաղւացանք այնքան երկար: Սական հայկական հարցը պակաս հետաքրիդ չէ քան բօերականը: 300 հազար մարդ, կին և երեխաներ՝ մատնւած սրի բերանին մի վեհապետի հրամանով — սա մի աւելի սոսկակի երեւոյթ է, որ պէտք է մռնէցնէ համաշխարհային գիտակցութիւնը: Ի՞նչ պէտք է ասէ մեր ժամանակում համանական բարձր պարագաներու մասնաւորութեանը: Եւրոպան վաղուց իվեր պարտաւորւել է ապահովել Հայաստանի խաղաղութիւնը, ստիպելով Տաճկաստանին բարենորո-

գումար մացնել երկրում ինչո՞ւ նա չէ արել այդ մինչեւ այժմ։ Անտարերսութեան և վասութեան այս ի՞նչ հողմ է, որ փշում է մեր օրերում քաղաքաբակրթուած աշխարհի վրայ, այս ի՞նչ անզգայութիւն է, որ թոյլ է տալիս մեզ սառնասիրո ականատես լինել ամենասուկալի սմբիւներին։ Եւ, տիկիններ, և պարուներ, մենք պարտաւոր ենք աւելին անել հեկատոմբների և աւերակների տակ թաղւած Հայաստանի համար, և ես առաջարկում եմ մասնաժողովի որոշման աւելացնել նաև հետևեալը։

Համաժողովը ցաւում է, որ պառակտումը, նախանձը և իւրաքանչիւր պետութեան մասնաւոր շահերի նեղ հասկացոյութիւնը խանդարել են վերոշխեալ գանձագրեալ ստորագրող կառավարութիւններին կատարել իրենց ամենաճշգրիտ պարտական սութիւնները գետի մի ժողովուրդ, որին հովանաւորելը ստիպողական է նրանց համար, համաձայն մի պաշտօնական պարտաւորութեան, որ ունի օրինական արժեք։ Համաժողովը յոյս ունի, որ համաշխարհային խղճի արթնացումը և քաղաքակիրթ աշխարհի զայրոյթը կը մղեն վերջապէս եւրօպական կառավարութիւններին մի արմատական վճիռ տալու հայկական ցաւագին հարցին, ինչպէս այդ տեղի ունեցաւ գեռ վերջերս կրէտէի համար։

Պ. Թօքէրտիից յետոյ գիմում է համաժողովին թիւրքաց նՄէշէրէթմ՝ լրագրի խմբագիր պ. Ահմէդ-Ռիզան և սկսում է իր ճառը մի ուստի կ ան ակ ան յայտարարութեամբ։ «Զարմանում եմ — ասում է նա որ մասնաժողովի երէկւայ նիստին հայերի առաջարկը քննելիս՝ ուստաց կառավարութեան ներկայացուցիչ պ. Ռաֆալօվիլը պահանջում էր մասնաժողովի առաջարկում մացնել նաև Ս. Ստեֆան օրիգանագրութիւնը թէկ Քերլինից յետոյ արդ գանձագրութիւնը ալլեւս գրյութիւն չունի։ Ել աւելի զարմանում եմ, որ մասնաժողովի որոշման ձայն տւեց այդ պահունական պատգամաւորը», որի կառավարութիւնը հակառակ Անդրեալին։ 1895 թիւ մայիսեան ծրագրիը իրագործելու խնդրում։

Անկարական Ստամբուլի լրտեսական նախասենեակներում իշխող բարոյական գոգմաններին աւելի հաւատալով՝ քան մարդկային մաքի ու խղճի պահանջներին, պարմար ուզեց իր այդ յայտարարութեամբ ասել, որ ուսւ կառավարութեան ինտրիգներն են ստեղծել և այսօր համաժողովի առաջ բերել իր, Ահմէդ-Ռիզայի, ինչպէս նաև ուզման Արդիւլ-Համբդի համար, ատելի «հայկական հարցը»։ Արևելեան այս ասեռւած կուլտուրայի մի զաւակի հաշիւ էր դա։ Համաժողովում կան բազմաթիւ համակրելի, բայց ուստաստեաց տարրեր - անգլիացիներ, Գրանսիացիներ և լուսնական Հայագործել նրանց հակառուսական տրամադրութիւնները և այդպիսով յետ մղել «հայկական հարցը» - ահա այդ հաշիւը եւ բարոյական այդ տիպարի մարդն է, որ ինքն իրեն համարում է «երիտասարդ թիւրքերի» ներկայացուցիչ։ այդ մարդն է, որ տարիներով Փարիզում ընկած ուրիշ ոչինչ չգիտէ, բայց եթէ հայերի հասցէին ուղղած ստոր զրպարտութիւններով՝ շահագործել մի շարք յարգելի մարդկանց հաւատը, այդ վատ թիւրքն է — թող ներեւ

մեկ աղնիւ թիւրքերը — որ խաղաղութեան համաժողովի բացման օրից ևս առաւտեանից մինչև երեկոյ չեռանում գահինից, ուզիւնալով անշուշտ իրեն յատուկ միջացներով եթէ ոչ իր ազգի համար էլ մի բան աներ, գոնէ լուեցնել մի ուրիշ ազգի բողոքը — հայկական բողոքը եւ ո՞վ գիտէ մինչև ուր կը գնար իր հրապարակական խսինուացիաներում պ. Ռիզան, բայց ժողովականների շշոցները ու բողոքները կանգնեցին նրան և նա տօնը փոխած շարունակեց այսպէս։

Համաժողովը չպէտք է զբաղի Տաճկաստանում ապրաղ առանձին ազգութիւնների խնդրով այն հիման վրայ, որ այնտեղ պայմանները բոլոր ազգութիւնների համար միւնոյն են։ Հայերի համար առանձին բարենորդումների խնդրը միտք չունի վերջապէս այն տեսակէտից, որ հայերը ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմում։ Ահա ինչու, պ. Ահմէդի կարծիքով, համաժողովը աւելի նպատակայարմար ընթացքի կը հետեւր, եթէ մերժելով մասնաժողովի և պ. Թօքէրտիի առաջարկները, ընդուներ հետեւեալ որոշումը։

Համաժողովը ցաւում է, որ մեծ պետութիւնները փոխանակ նպաստելու ընդհանուր բարենորդումների իրագործմանը Տաճկաստանում, առանց խտրութեան ազգի և կրօնի, պաշտպանել են և պաշտպանում են կամայական ուեժիմը մի սուլթանի, որ սիստեմատիքաբար հակառակում է քաղաքական կամ հասարակական ուել բարելաւութեան և որը խկական պատճառն է այն վարչական անկարգութիւնների, որոնք ճնշում են մուսուլմաններին նոյն չափով, ինչ չափով և քրիստոնեաներին։

Պարոնին պատասխանում են՝ պրօֆէսօր Մառիլիէ, Միքայէլ Յովհաննիսեան և «Անահիտ» հանդէսի իրագիր պ. Զօպաննեան, պօլսեցի։

Պրօֆէսօր Մառիլիէն մի փայլուն ձառի մեջ շեշտում է, որ ինքը միանգամայն հակառակ է պ. Ահմէդ-Ռիզայի առաջարկութեան ու զերմ կողմնակից մասնաժողովի և Թօքէրտիի կարծիքներին։ «Ծողովը չպէտք է մոռանայ ասում է յարգեին պրօֆէսօրը — որ թիւրքիան այն երկրներից է, որոնք իրենց ընդհանուր բարեկարգման համար պահանջում են անորոշ երկար ժամանակ, այն ինչ հայերի զրութիւնը կարօտ է անմիջական ու օգնութեան, և եթէ այդ օգնութիւնը չտրւի նրանց նրանք կը ջնջւեն ամենամօտիկ ժամանակում։ Դրա համար հարկաւոր էլ չէ, որ վերաբանութեան 1895-1896-ի ընդհանուր կոտորածները, դրա համար միանգամայն բաւական են այն մասնակի կոտորածները, ընդհանուր թշւառութիւնն ու անապահութիւնը, որոնք անընդհատ իշխում են գրաբալս Հայաստանում։ Ահա ինչու համաժողովը՝ իր որոշումներում միանգամայն առանձին տեղ տալով՝ «հայկական խնդրին», կը կատարի միման իր ամենատարրական, անհրաժեշտ պարտականութիւնը եթէ մի անյալբարութիւն կայ պ. Թօքէրտիի յաւելում մեջ — կրէտէի օրինակը, որ գուցէ վէճերի առիթ տայ համաժողովը կարող է իրբե ելակէտ ընդունել 1895 թւի մայիսեան ծրագիրը, — մի ծրագիր, որը մշակել և ստորագրել են թէ պետութիւնները և թէ ինքը սուլթանը։ Եւ եթէ մեծ պետութիւնները հայերի համար անհրաժեշտ բարենորդումների կարիք էին զգում գեռ 1895 թւի սկզբին; ապա ուրեմն զրանից յետոյ տեղի

ունեցած աներևակայելի անգթութիւնները աւելի ևս հարկեցուցիչ են դարձնում 61-րդ յօդւածի հիման վրայ հայերի համար պահանջւող բարեփոխումների և ապահովութեան երաշխաւորութիւնները¹¹:

Միահամուռ ծափահարութիւններ:

Պ. Մ. Յովհաննիսեանը, կամենալով հայ կական
և թիւրքական հարցերը որոշապէս զատել, ասաց
հետևեալ:

„Տիկիններ և պարոններ. Թիւրք պատգամաւորի խօսքերը ձգտումն ունին ի մի ձուլել հայկական և լնդհանուր տաճկական խնդիրները — երկու խնդիրներ, որոնք էապէս տարբեր են իրարից: Մինչդեռ Օսմանեան կայսրութեան լնդհանուր բարենորդումը տեղ ական մի խնդիր է, որ վերաբերում է սուլթանների ներքին քաղաքականութեան — հայկական հարցը վաղուց արդէն մտած է միջազգային իրաւունքի մէջ: Նա դրւել է պաշտօնապէս դիւնագիտութեան կողմից դեռ 22 տարեա սրանից առաջ և Եւրոպան հանդիսաւոր պարտականութիւններ է ստանձնել միջամտելու շարունակ յօդուտ հայերին Բայր մի մոռացէք մանաւանդ, տիկիններ և պարոններ, այն բարձրագոչ փաստը, որ հայութիւնը տւել է 300,000 զոհ՝ խողխողած օսմանեան վեհապետի հրամանով: Միմիայն այդ չարդը, որ մեծագոյնն է մարդկային պատմութեան արհաւելքներից՝ հոգի ու մարմին է տալիս Բերլինի դաշնադրի 61-րդ յօդւածին... Կարելի՞ է վերջապէս այնքան մօտ համատութիւն գնել հայ և թիւրք մողովուրդների փեճակի մեջ: Այն ժամանակ, երբ, միւս հաւասար պարմաններում, թիւրքերը լինակատար կերպով օգտառում են իրենց նախնական-մարդկային իրաւունքներից — այսինքն՝ ունեն ապա հովութիւն կեանքի և ստացւածքի, — Հայաստանը մեթոդիք բնաջնջման բեմ է ներկայացնում. ամբողջ հայ ժողովուրդը — խաղաղ և անզէն — մատնած է Կարմիր Հրէշի գաղանութիւններին... Այսուհետեւ տարբերութիւնը երկու դրութիւնների մէջ խոր է, անվերածելիք: Համաժողովը պարտաւոր է ուշադրութեան առնել այդ տարբերութիւնը և չմոռանալ: Որ աիեւզերական խաղաղութեան նպատակներից շատ հեռու է մի դրութիւն, ուր հայերը շարունակում են հեծկուալ մի բարբարոս ուժիմի տակ, որը այնքան անգամ նշաւակւել է քաղաքակրթւած աշխարհի ամենահեղինակաւոր ձայններով:

Պ. Զօպանեանը յայտնում է, որ պ. Ահմէդ-Ռիզան
իր ընդհանուր առաջարկութիւնը հանդէս բերելով՝ ու-
զում է խանդարել Հայերին և այդ պատճառով նա-
այլես չէ յարգելու պ. Ռիզային, ինչպէս յարգում էր
մինչև այժմ (Տրտունչներ): Բայց ժողովը պէտք է ինկատի-
ունենայ Հայերի ծանր կացութիւնը և կայացնի առանձին
որոշում:

“սախագահ Ծարլ Ուիշեն դէմ չէ պրօֆէսօր Դը-Ռօբէրտիի յաւելման, միայն անյարմար է դտնում Կրէտէի դէպքի յիշելը: Դը-Ռօբէրտի առաջարկում է “դիւանագէտների ձեռքերը չկապելու” համար, այդ համեմատութեանը աւելացնել որինակ” խօսքը:

Պատւաւոր Նախագահ Պասին — մի զառամեալ ծերունի, որ յայտնի է իր երկարամեայ գործունէութեամբ

Խաղաղութեան կազմակերպութիւններում — գրաւիչ
պերճախօսութեամբ ուզում է, որ պահպանւի „Կրէտէ“
խօսքը, բայց մի ուեէ այնպիսի ձևով, որից չհետեւեր
թէ համաժողովը ձգտում է պարտաւորեցնել պետու-
թիւններին բարելաւել Հայերի գրութիւնը անպատճառ
Կրէտէի սահմանադրութեան համաձան:

Սի ուրիշ ձառախօս—շվենդացի պ. Վուարօլ—առաջարկում է ընդհանրացնել ճնշւած ազգերի հարցը և՝ ինկատի առնելով իրավանդական, ֆինանսական, ալժիրական և ուրիշ ննդիրները, ընդունել այսպիսի մի որոշում։

„Համաժողովը ցաւում է, տեսնելով, որ զանազան կառավարութիւններ շարունակում են գործադրել ամօթալի ձնչումներ իրենց տիրապետութեան են-թարկւած ազգութիւնների վերաբերմամբ“:

Վերջապէս նախագահը փակում է վիճաբանութիւն-
ները և սկսում է քւեարկութիւն:

Քւեարկւում է նախ պ. Արիզայի առաջարկը:
Մերժում (Ժափանարութիւններ):

Ապա՝ Վուարօլի առաջարկը:

U.S. GOVERNMENT

Վերջում՝ մասնաժողովի առաջարկը Դը-Ռօքէլտիի
լաւելումը (ապօի Կոէտէի օէինակո):

Ը ս գ ու ն ւ ու մ է ա հ ա գ ի ն մ ե ծ ա մ ա ս ո ւ թ ե ա լ ի ք :

Դ-ԱՀԸՆ Ժամանակակից արության մեջ:

Հալթուղամաս չառաշողնոցը որոշումները, որով
հետևեալ օրը հրատարակեցին ամբողջ մարդկութեան
ուղղած մի կոչի ձևով, պէտք է անմիջապէս հաղորդեէին
ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէկասէին,
իսկ վերջինս իր կողմից այդ որոշումները պիտի ներկայացնէ
եւրոպական բոլոր պետութիւններին:

U R H P U S H O H P H H U

ЩРЫНЬІСШ РІХІРОВ ստացած է՝

Սկզբնակից 20 ուրեմի, Կ. Յ. Տ. Ա. 25, Խաչուայ լիդ
18 թ. 10 կու, Արշաբյուսից 10, Սկսնակից 20, Կոտորածից 20,
Շան բաղադրից 100, Սկսնակից 25 Ընդամենը 238 թ. 10 կու.:

ՆԱՒԱՅԱՆԳՍՏԻ Կօմիտէն

Դաւիթ Բ.-ից (Քարազի Մ.-ի հարսանիքում հանգանակած
7 ո. 25 կտա, Սպառապետի եւ Դաւիթ Բ.-ի մեջողով մեր
թշնամուց 2 ո., Գորդինից 50 կտա, ԶՈՐԱՓՈՐԻ շնչալսերից
5 ո., ԶՐԱԾԵՆԻ „Դբառու“ խմբից 10 ոռութիւն Գումար 24 ոռութիւն
75 կտաէկ:

ԱՊՐՈՎԱԴԻ Կօմիտէն՝

1899 թ. յուլիս-դեկտեմբեր ամիսներին՝ պատկերներից 10 ուռելի: Նեղուկից 50, Նյումընք 13-ից 21, 1900 թ. յունար-յունիս ամիսներին՝ Մանգովից 60, Օնանից պատկերների համար 20, Թիժուց 10, Տիկին 10 Մանուկ 23, 50, Կօշաւալա 90, Ոյֆ 100, պատկերներից 20, Կանանցից 50. 50, Գազանից 13 և Գումար 387 ուռելի:

n u p h p

Ա.ԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Լոյս տեսաւ առաջին գրքոյկը: Դինն է 50 սանտիմ, ճանապարհած ախսով՝ 60 սանտիմ: Դրմել

Rédaction du Droschak, Genève (Suisse)